



ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ
հասարակական կազմակերպություն

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏ ԼԻՆԵԼՈՒԻ ԻՐԱՎՈՒՆՔ



Օքսֆամ ՄԲ Հայաստան



ԲՀԻ ՕՀ
Հայկական մասնաճյուղ

Երևան 2010

ՀՏԴ 349:341

ԳՄԴ 67.99 (2Հ)+67.91

Խ894

Կազմողներ՝ Ժ. Խաչատրյան
Ք. Գևորգյան
Խմբագիր՝ Յու. Հովհաննիսյան

**Խ894 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱ-
ՎՈՒՆՔ-** Եր: «Ընդդեմ իրավական կամայական-
նության» հասարակական կազմակերպու-
թյուն, 2010թ.- 74 էջ:

Սույն ձեռնարկը նախատեսված է Օքսֆամ ՄԲ Հայաստանյան մասնաճյուղի, «Բաց հասարակության ինստիտուտ» միջազգային կազմակերպության կողմից հովանավորվող և «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ-ի միջոցով իրականացվող «Համայնքի ձայնը որոշումների կայացման գործընթացում. կարողությունների և հանձնառության հզորացում» և «Տնտեսական իրավունքների պաշտպանություն» ծրագրի շահառուների համար:

Նկատի ունենալով, որ ցանկացած իրավունքի պաշտպանությունը կարող է բախվել օրենքում առկա կամ վարչական մարմնի խտրական մոտեցմանը, կարևորվել են խտրականությանը վերաբերող խնդիրները և փորձ է արվել լուսաբանել խտրականության էությունն ու բովանդակությունը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի, Եվրոդատարանի և ԱՄՆ Գերագույն դատարանի մոտեցումների լույսի ներքո: Աշխատանքում հատկապես կարևորվել են ԱՄՆ-ի օրենսդրության զարգացումները, ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումները՝ նկատի ունենալով, որ

այդտեղ առավել ակնառու են խտրականությանը վերաբերող խնդիրները:

Կազմակերպությունն ակնկալում է ստանալ ընթերցողների կարծիքներն ու առաջարկությունները՝ նման ձեռնարկներն առավել լիարժեք դարձնելու նպատակով:

ՀՏԴ 349:341

ԳՄԴ 67.99 (2Հ)+67.91

ISBN 978-99930-919-9-8

Երևան, © «Ընդդեմ իրավական կամայականության»
հասարակական կազմակերպություն

Ց Ա Ն Կ

1. Խտրականության բովանդակությունը-----	5
2. Խտրականությունը բացառող իրավական ակտեր----	10
Ա. Միջազգային փաստաթղթեր-----	10
ա-1. ՄԱԿ-ի ընդունած փաստաթղթեր-----	10
ա-2. Եվրոխորհրդի ընդունած փաստաթղթեր-----	14
ա-3. ԱՄԿ փաստաթղթեր-----	18
Բ . Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր-----	20
3. Խտրականության դրսևորման ձևերը-----	28
3.1 Խտրականությունն իրավական ակտում-----	28
3.1.1 ԱՄՆ-Ի Գերագույն դատարանի մոտեցումները---	29
3.1.2 Մարդու իրավունքների կոմիտեի մոտեցումները--	41
3.1.3 Եվրոդատարանի մոտեցումները խտրականության հարցերի նկատմամբ -----	46
3.1.4 Խտրականության խնդիրները ՀՀ իրավական ակտերում-----	54
4. Խտրականության դրսևորումները իրավակիրառական պրակտիկայում -----	58
5. Խտրականություն չհամարվող տարբերակում-----	66

**ԽՏՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏ ԼԻՆԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
/ԽՏՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ/**

1. Խտրականության բովանդակությունը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ներածությունում ասված է՝ **«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ՝ օժտված բոլոր իրավունքներով և ազատություններով»:**

Անսահմանափակ իրավունքներով և ազատություններով ծնված անհատի բնական իրավունքները և ազատությունները քաղաքացիական հասարակության պայմաններում ենթարկվում են որոշակի սահմանափակման:

Երբ քաղաքացիական հասարակությունը՝ իր ներքին ներդաշնակությունն ապահովելու նպատակով, օրենքների միջոցով որոշ իրավունքներ և ազատություններ ենթարկում է սահմանափակման, նախատեսում է նաև չսահմանափակված իրավունքների և ազատությունների պաշտպանության և իրականացման մեխանիզմներ:

Այս պայմաններում է, որ առաջ է գալիս խտրականության բացառման անհրաժեշտությունը՝ օրենքի առջև բոլորի հավասարության, օրենքի կողմից բոլորին հավասար պաշտպանություն և իրավունքի իրականացման հավասար հնարավորություններ երաշխավորելու անհրաժեշտությունը:

Բնական իրավունքի տեսության ներկայացուցիչների պնդմամբ՝ մարդ անհատը, դառնալով քաղաքացիական հասարակության միավոր, հասարակական դաշինքի հիման վրա, իր բնական իրավունքների և ազատությունների մի մասը զիջում է Սուվերենին /դաշինքի հիման վրա ստեղծված պետությանը/, դրա փոխարեն ձեռք է բերում այլ իրավունքներ՝ Սուվերենին չզիջած իրավունքների պաշտպանություն ստանալու իրավունք:

Այս տեսությունից արվող ամենապարզունակ տրամաբանական հետևությունն այն է, որ քաղաքացիական հասարա-

կություն կազմող անհատներից յուրաքանչյուրը Սուվերենին զիջում է մյուսներին հավասար իրավունքներ, յուրաքանչյուրը կորցնում է նույնքան, որքան մյուսները և մյուսների հետ հայտնվում է դարձյալ հավասար պայմաններում: Հետևաբար, յուրաքանչյուրը Սուվերենից իրավունք ունի պահանջելու նույնքան, որքան մյուսները, իսկ Սուվերենը պարտավոր է յուրաքանչյուրին տրամադրել հավասար պաշտպանություն և իրավունքից օգտվելու հավասար հնարավորություններ:

Բնական իրավունքի տեսաբաններն էին, որ տեսակետորեն նախապատրաստեցին 1789 թվականի Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը, որն առաջնորդվում էր՝ **«արդարություն», «հավասարություն», «եղբայրություն»** հիմնական կարգախոսերով: Թե հեղափոխությունը որքանով կարողացավ հավատարիմ մնալ իր այդ կարգախոսին, այլ հարց է:

Յուրաքանչյուրի կողմից իրավունքի սահմանափակումների հետևանքներն այլոց հետ հավասարապես կրելու և չսահմանափակված իրավունքներից հավասարապես օգտվելու և հավասար պաշտպանություն ստանալու հնարավորությունը կազմում է խտրականության բացառման բովանդակությունը, որը ներառում է նաև հասարակության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին մասնակցելու, իր սոցիալ-տնտեսական ու մշակույթային կարիքները բավարարելու, իր ինքնությունը հաստատելու համար այլոց հետ հավասար հնարավորություններ ունենալու իրավունքը:

Բոլոր ժամանակներում հասարակական դժգոհությունների, հեղափոխությունների հիմնապատճառը եղել է հասարակության շերտավորումն ըստ դասային պատկանելության՝ իշխողների և հպատակների, սեփականատերերի և ունեզուրկների:

Նման շերտավորումն արդյունք է եղել ոչ թե քաղաքացիական հասարակություն կազմող անհատների ֆիզիկական և մտավոր անկարողության, այլ նրանց համար իրավունքների և հնարավորությունների բացակայության կամ սահմանափակման, խտրականության օրինականացման:

Այստեղ տեղին է հիշել, որ հռոմեական իրավունքը դեռևս մեր թվարկությունից առաջ 5-րդ դարում, իրավագիտության բնագավառ ներմուծելով **«իրավունակություն»** հասկացությունը, ճանաչել և օրինականացրել է հասարակության տարբեր շերտերի իրավունակության տարբերակումը:

Օրինակ՝ խոսք լինել չէր կարող ստրուկների իրավունակության մասին ընդհանրապես, խոսք լինել չէր կարող պատրիկների և պլեբեյների հավասար իրավունքներ ունենալու, հետևաբար և հավասար իրավունակություն ունենալու մասին: Օրինականացված էր անհավասար իրավունակությունը նույնիսկ ընտանիքում: **Ընտանիքում բոլոր իրավունքները պատկանում էին ընտանիքի գլխավորին, ընտանիքի անդամները /ազնատներ/ իրավագուրկ էին այնքան ժամանակ, քանի դեռ ընտանիքի գլխավորը կենդանի էր:**

Կանանց նկատմամբ, համաձայն «12 տախտակների» օրենքի, նույնիսկ չափահաս տարիքում, պետք է սահմանվեր խնամակալություն, բացառություն էր արվում վեստալուհիների համար:

Ստրկատիրությունը, ճորտատիրությունը, որոնք առկա են եղել ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջերը, խտրականության առավել զցույց դրսևորումներն են:

Մարդկությանը հազարամյակներ անհրաժեշտ եղան հասկանալու համար, որ **«Մարդկային ընտանիքին ներհատուկ արժանապատվության և հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմքն է»:** Այսպես է սկսվում

ՄԱԿ-ի կողմից 1948 թվականին ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ներածությունը:

Այդ առումով կարևոր է հիշել, որ ամերիկյան գովերգվող ժողովրդավարությունը մինչև 19-րդ դարի վերջերը դեռևս պահպանած է եղել ստրկությունը: ԱՄՆ-ի 1787 թվականի Սահմանադրությունը, որն առաջինն է աշխարհում, հիմքում ունենալով 1776 թվականի Անկախության հռչակագիրը, ինչպես նաև Անգլիական Ազատությունների մեծ խարտիայի առաջադեմ սկզբունքները, հիմնական խնդիր է համարել իշխանությունների բաժանման հարցի լուծումը: Այն անդրադարձ չի կատարել մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին:

Սահմանադրության հետագա 10 ուղղումները, որոնք անվանվել են իրավունքների Բիլլ, ստրկության վերացման սկզբունքներ չէին պարունակում: Միայն 31.01.1865 թվականին առաջարկված Սահմանադրական 13-րդ ուղղումով է, որ արգելվել է ստրկությունը: Այդ ուղղումով ամրագրվում է՝

«Ոչ Միացյալ նահանգներում, ոչ որևէ այլ տեղ, որի վրա տարածվում է նրա իրավասությունը, չպետք է գոյություն ունենա ո՛չ ստրկություն, ո՛չ հարկադիր աշխատանք՝ բացառությամբ հանցագործության համար պատժի, որի համար անձը դատապարտվել է»:

Այս ուղղումը նահանգների կողմից վավերացվել է 06.12.1865 թվականին:

Օրենքի առջև հավասարությունը սահմանվել է 1866 թվականի սահմանադրական 14-րդ ուղղումով: Որոշ նահանգներ այն վավերացրել են միայն 1959 թվականին:

Չայնի իրավունքի հարցերում ռասայական խտրականության արգելումը սահմանվել է 1869 թվականին 15-րդ ուղղումով, վավերացվել է 1870 թվականին, իսկ որոշ նահանգներ այն վավերացրել են միայն 1950 թվականին:

Ձայնի իրավունքի սահմանափակումը սեռի հիմքերով արգելվել է 19-րդ ուղղումով, որն առաջարկվել է 1919 թվականին և վավերացվել է միայն 1920 թվականին:

Սահմանադրական այսպիսի դրական զարգացումների համար նպաստավոր է եղել իշխանությունների բաժանման սկզբունքի ամրագրումը Սահմանադրության սկզբնական տեքստում, որը և բազիս է հանդիսացել իրավունքների և ազատությունների հավասարության, դրանց հավասար պաշտպանության հնարավորությունների վերնաշենքը կառուցելու համար:

Իշխանությունների իրական բաժանման արդյունքում է, որ Ամերիկյան Գերագույն դատարանը կարևոր դեր է ունեցել և կարևոր դեր ունի մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, դրանց գերակայության սկզբունքների ձևավորման և օրենսդրորեն ամրագրման, հատկապես խտրականության բացառման հարցերում:

Այն պայմաններում, երբ ստրկությունն ամբողջովին վերացված չի եղել, երբ առանձին նահանգներ շարունակել են դեկավարվել իրենց առանձին օրենքներով, երբ մաշկի գույնը կարևորվում էր նույնիսկ օրենքով սահմանված իրավունքների պաշտպանության հարցերում, Ամերիկյան դատարանն, այնուամենայնիվ, հաճախակի կարողացել է հաղթահարել տվյալ ժամանակաշրջանի բարոյական ըմբռնումների արատավոր կողմերը և ընդունել նախադեպային այնպիսի ակտեր, որոնք իրավունքի հարցերում հետագայում դարձել են ոչ միայն Ամերիկյան սահմանադրության նորմեր, այլև համամարդկային արժեքներ: Դրանք նաև էական ազդեցություն են ունեցել մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող միջազգային փաստաթղթերի մշակման և ընդունման հարցերում:

Ամերիկյան Գերագույն դատարանի նախադեպային որոշումներից օրինակները կներկայացվեն ստորև՝ խտրակա-նության դրսևորման ձևերը քննարկելիս:

2. Խտրականությունը բացառող իրավական ակտեր

Ա. Միջազգային փաստաթղթեր

Խտրականության բացառումը որպես իրավական սկզբունք կարևորվել և ամրագրվել է Միացյալ ազգերի կազմակերպության, Եվրոխորհրդի և միջազգային այլ կազմակերպությունների մի շարք փաստաթղթերով, որոնց միացել է աշխարհի պետությունների հիմնական մասը՝ ստանձնելով իրենց ներքին օրենսդրությունն այդ պահանջներին համապատասխանեցնելու պարտավորություն այն հաշվով, որպեսզի բացառվի խտրականության ցանկացած դրսևորում ինչպես պետության և նրա պաշտոնատար անձանց գործունեության ընթացքում, այնպես էլ հասարակական հարաբերություններում:

ա-1 ՄԱԿ-ի ընդունած միջազգային փաստաթղթեր

ՄԱԿ-ի ընդունած և խտրականությունը բացառող նորմեր պարունակող փաստաթղթերից հատկապես կարևորվում են հետևյալները.

1/ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը /այսուհետ՝ Հռչակագիր/:

Սա այն հիմնական միջազգային փաստաթուղթն է, որը ելակետային է մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող այլ միջազգային փաստաթղթերի համար:

Հռչակագրի 2-րդ հոդվածով ամրագրված է խտրակա-նության անթույլատրելիության սկզբունքը, ըստ որի՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ

տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, կամ այլ կարգավիճակը:

2. Ավելին, չպետք է կատարվի որևէ տարբերակում ելնելով այն երկրի կամ տարածքի քաղաքական, իրավական կամ միջազգային կարգավիճակից, որին պատկանում է անձը, լինի այն անկախ, ինամարկյալ կամ ինքնիշխանության որևէ սահմանափակումով»:

Ինչպես կարելի տեսնել, հոդվածի 2-րդ մասը Հոչակագրում ամրագրված իրավունքները և ազատությունները նկատի ունի մարդու համար ընդհանրապես, դրանք չի պայմանավորում այն երկրի կարգավիճակով, որի քաղաքացին է կոնկրետ անձը:

2/ ՄՄԿ-ի կողմից 16.12.66թ ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը /այսուհետ՝ Դաշնագիր/:

Դաշնագիրը և դրան կից Կամընտիր արձանագրությունը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ են մտել 1993 թվականի սեպտեմբերի 23-ից:

Դաշնագրի 2-րդ հոդվածով, Հոչակագրի 2-րդ հոդվածին համապատասխան, ամրագրված է.

«1. Մույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավագործության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

Դաշնագրի 26-րդ հոդվածով ամրագրված է՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրականության,

ունեն օրենքով հավասար պաշտպանության իրավունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկացած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավասար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը»:

Նույնի շարունակությունն է 27-րդ հոդվածը, ըստ որի՝ «Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային, կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամների հետ համատեղ իրենց մշակութից օգտվելու, իրենց կրոնը դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լեզուն օգտագործելու իրավունքը»:

3/ ՄԱԿ-ի կողմից 16.12.1966 թվականին ընդունված «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը /այսուհետ՝ Դաշնագիր/,

Դաշնագրի 3-րդ հոդվածով ամրագրված է. «Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են տղամարդկանց և կանանց համար ապահովել սույն Դաշնագրով նախատեսված բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունք»:

Այս Դաշնագրով հատկապես շեշտվել է սեռի հիմքով խտրականության բացառման անհրաժեշտությունը:

Դաշնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

4/ ՄԱԿ-ի կողմից «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 18.12.1979թ. ընդունված Կոնվենցիան /այսուհետ՝ Կոնվենցիա/:

Կոնվենցիայի նախաբանում ասված է՝ «Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

նշելով, որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը վերահաստատում է հավատք մարդու հիմնարար իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության ու արժեքի, տղամարդկանց ու կանանց իրավահավասարության նկատմամբ,

նշելով նաև Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների կողմից ընդունված տղամարդկանց և կանանց իրավահավասարությանը նպաստող բանաձևերը, հռչակագրերն ու հանձնարարականները,

մտահոգված, որ, չնայած այդ զանազան փաստաթղթերին, կանանց նկատմամբ շարունակում է գոյություն ունենալ զգալի խտրականություն,

համոզված լինելով, որ երկրի լիակատար զարգացումը, աշխարհի բարեկեցությունը և խաղաղության գործը պահանջում են տղամարդկանց հետ հավասար պայմաններով կանանց առավելագույն մասնակցություն բոլոր բնագավառներում,

լի վճռականությամբ՝ իրագործելու կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին Հռչակագրում ամրագրված սկզբունքները և այդ նպատակով ձեռնարկելու բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են նման խտրականությունը իր բոլոր ձևերով ու դրսևորումներով վերացնելու համար,

Համաձայնվեցին ներքոհիշյալի շուրջը».

Նախաբանի այս ոգով էլ սահմանված են Կոնվենցիայի հիմնարար սկզբունքները:

Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված է կանանց նկատմամբ խտրականության հասկացությունը, ըստ որի՝ «Սույն Կոնվենցիայի նպատակների համար «Կանանց

նկատմամբ խտրականություն» հասկացությունը նշանակում է սեռի հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որը նպատակ ունի կանանց համար սահմանափակել կամ վերացնել քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակույթային, քաղաքացիական կամ ցանկացած այլ բնագավառում, տղամարդկանց և կանանց, անկախ նրանց ամուսնական կարգավիճակից, հավասարության հիմքով, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ճանաչումը և կանանց կողմից այդ իրավունքների ու ազատությունների իրականացումը կամ դրանցից օգտվելը»:

Այնուհետև սահմանվում են պետության պարտականությունները՝ կանանց համար տղամարդկանց հետ հավասար հնարավորություններ ապահովելու խնդիրներում:

5/ Խտրականությանը նվիրված ՄԱԿ-Ի փաստաթղթերից են նաև «Ապարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին» 30.11.1973թ. ընդունված և «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 09.12.1949թ. ընդունված Կոնվենցիաները: Դրանք դասված են մարդկության դեմ ուղղված հանցագործությունների շարքին և վերլուծության առանձին առարկա են:

ա-2/ Եվրոխորհրդի ընդունած փաստաթղթեր

Խտրականության բացառման վերաբերյալ Եվրոպական խորհրդի ընդունած և խտրականությունը բացառող նորմեր պարունակող փաստաթղթերից կարևորվում են հետևյալները՝

1/ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոխորհրդի 04.11.1950թ.

ընդունած կոնվենցիան /այսուհետ՝ Եվրոկոնվենցիա կամ Կոնվենցիա/:

Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ից:

Կոնվենցիայի 1-ին հոդվածում ասված է. «Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագրության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն կոնվենցիայի առաջին բաժնում»:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը պարունակում է մասնակից պետությունների համար պարտականություն՝ յուրաքանչյուրի համար ապահովելու Կոնվենցիայով ամրագրված իրավունքներից առանց խտրականության օգտրվելու հնարավորություն: Հոդվածում ասված է՝ «Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»:

Այս հոդվածով ամրագրված «Օրենքի առջև բոլորը հավասար են» դեկլարատիվ նորմը դարձվում է բովանդակային այն առումով, որ օրենքի առջև հավասարության ապահովման՝ պետության պարտականությունը դառնում է որոշակի:

2/ Եվրոխորհրդի կողմից 04.11. 2000թ. ընդունվել է նույն Կոնվենցիային կից թիվ 12 արձանագրությունը

Արձանագրության 1-ին հոդվածը վերնագրված է՝ «Խտրականության ընդհանուր արգելում» և ապա ասված է.

«1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքի կիրառումը պետք է երաշխավորվի առանց խտրականության որևէ դրսևորման, օրինակ՝ սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի,

քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փոքրամասնության պատկանելության, սեփականության, ծննդյան կամ այլ կարգավիճակի հիման վրա:

2. Ոչ ոք չի կարող պետական իշխանության կողմից ենթարկվել խտրականության որևէ դրսևորման՝ ինչպես օրինակ առաջին կետում նշված հիմքերով»:

Սա Կոնվենցիայի 14-րդ հոդվածի առավել հստակեցումն է՝ պետության պարտականության վրա շեշտադրում կատարելու միջոցով:

3/ Եվրոխորհրդի կողմից 01.02. 1995թ. ընդունված «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» Շրջանակային Կոնվենցիան /այսուհետ՝ նաև Կոնվենցիա/:

Այն ամբողջովին նվիրված է ազգային փոքրամասնությանը պատկանող անձանց կամ անձանց խմբի նկատմամբ խտրականության դրսևորումների բացառման խնդիրներին:

Հայաստանի Հանրապետության համար Կոնվենցիան ուժի մեջ է մտել 18.11.1998թվականին:

Կոնվենցիայի 4-րդ հոդվածում ասված է. «1.Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջև հավասարություն և օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:

2.Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային

փոքրամասնության և բնակչության մեծամասնության միջև լիակատար և իրական հավասարությանը; Այս նպատակով կողմերը, ըստ պատշաճի, պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:

3. Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն»:

4/ Վերը նշված Շրջանակային Կոնվենցիայի ընդունմանը նախորդել է «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին» Եվրոպական Խարտիան, որն այդ լեզուների պահպանումը, որպես մարդկության մշակութային արժեքների պահպանություն դիտարկելով հանդերձ, դիտարկում է նաև որպես ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրականության բացառման մեխանիզմներից մեկը:

Խարտիան ընդունվել է 05.11.1992 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից, և որպես իր տարածքում Խարտիայի իմաստով ազգային փոքրամասնությունների լեզուներ, նշված են՝ ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:

5/ Թվարկված փաստաթղթերի շարքում կարևորվում է նաև 1996 թվականի մայիսի 3-ին ընդունված «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան», որը նվիրված է բնակչության սոցիալական խնդիրների ապահովման բնագավառում Խարտիային մասնակից պետությունների պարտավորություններին:

Խարտիայի 5-րդ մասի «Ե» հոդվածը վերնագրված է «Անխտրականություն» և ապա ասված է՝ «Մույն խարտիայում նշված իրավունքներից օգտվելը պետք է

երաշխավորվի առանց խտրականության որևէ հիմքի, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, առողջությունը, ազգային փոքրամասնությունը պատկանելը, ծնունդը կամ այլ կարգավիճակը»:

Խարտիան պարունակում է նաև հոդվածի մեկնաբանություն, որով ասված է՝ «Օբյեկտիվ և բանականորեն արդարացման վրա հիմնված տարբերակված վերաբերմունքը չպետք է համարվի խտրական»:

ա-3/ Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՄԿ/ փաստաթղթեր

Միջազգային այս կառույցի փաստաթղթերը, վերաբերելով այնպիսի կարևոր բնագավառի, ինչպիսին աշխատանքի և աշխատանքային հարաբերությունների բնագավառն է, մասնակից պետությունների համար սահմանում է պարտավորությունների այն նվազագույն շրջանակը, որը պետք է երաշխավորի տվյալ բնագավառում խտրականության բացառումը:

ԱՄԿ-ի նման բնույթի փաստաթղթերից հատկապես կարևորվում են՝

1/ «**Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության մասին**» Կոնվենցիան, որն ընդունվել է 1951 թ. հունիսի 29-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է 1995թ. հուլիսի 29-ից:

Համաձայն Կոնվենցիայի 1-ի հոդվածի «բ» կետի՝ «**Համարժեք աշխատանքի դիմաց համարժեք վարձատրում**» հասկացությունը վերաբերում է վարձատրության դրույքաչափերին, որոնք սահմանվում են առանց սեռական հատկանիշով խտրականության»:

Համաձայն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «**Վարձատրության դրույքաչափերի միջև տարբերությունը,**

որը համապատասխանում է կատարվող աշխատանքի օրյեկտիվ գնահատումից բխող տարբերությանը, չի դիտվում որպես համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրության սկզբունքին հակասող»:

2/ «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին» Կոնվենցիան, որն ընդունվել է 1958թ. հունիսի 25-ին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թ. հուլիսի 29-ից:

Կոնվենցիայի 1-ին հոդվածով պարզաբանվում է՝ «1. Սույն Կոնվենցիայի համար «խտրականություն» հասկացությունը ներառում է.

/ա/ ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական համոզմունքի, ազգային ծագման կամ սոցիալական պատկանելության հիմքով ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որի հետևանքով վերանում կամ խախտվում է աշխատանքի ու զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարությունը,

/բ/ աշխատանքի և զբաղվածության բնագավառում հնարավորության կամ վերաբերմունքի հավասարության վերացմանը կամ խախտմանը հանգեցնող ցանկացած այլ տարբերակում, մերժում կամ նախապատվություն, որ կարող է սահմանել համապատասխան անդամը /պետությունը/՝ խորհրդակցելով գործատուների և աշխատողների ներկայացուցչական կազմակերպությունների, որտեղ այդպիսիք կան, և այլ համապատասխան մարմինների հետ:

2. Որոշակի աշխատանքի հետ կապված ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը հիմնված է այդ աշխատանքների հատուկ պահանջների վրա, խտրականություն չի համարվում»:

Հայաստանի Հանրապետությունը միացել է միջազգային այս փաստաթղթերին և դրանք, համաձայն ՀՀ Սահմանադ-

րության 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Այդ պայմանագրերի հիմնարար սկզբունքները տեղ են գտել նաև ՀՀ Սահմանադրությունում և օրենքներում:

Բ. Հայաստանի Հանրապետության իրավական ակտեր

բ-1 ՀՀ Սահմանադրություն՝

ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, փոփոխվել և լրացվել է 2005թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեով: Փոփոխություններն ուժի մեջ են մտել 2006թ. հունվարի 3-ից:

Սահմանադրության 14.1 հոդվածը նվիրված է խտրականության արգելմանը և ամրագրում է՝

«Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև:

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Սահմանադրության 2-րդ գլուխը վերնագրված է՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և պարտականությունները»:

Այս գլխի իրավունքները և ազատությունները սահմանելիս բոլոր դեպքերում օգտագործվում է **«յուրաքանչյուր ոք»** հասկացությունը /առանձին բացառություններով/, որով կոնկրետ հոդվածով ամրագրված իրավունքը վերագրվում է ոչ թե առանձին անհատի կամ անհատների խմբի, այլ յուրաքանչյուրին, ապահովելով 14.1 հոդվածով սահմանված խտրականության բացառման սկզբունքի գործողությունը:

Այս կանոնից բացառություն են կազմում նույն գլխի որոշ հոդվածներ, որոնցով սահմանված իրավունքների կրողը կարող են լինել միայն Հայաստանի Հանրապետության քաղա-

քացիները: Օրինակ՝ ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու, կուսակցություններ կազմելու և դրանց անդամակցելու, հողի սեփականությունից օգտվելու իրավունքները սահմանվում են միայն ՀՀ քաղաքացիների համար:

Այս սահմանափակումները չեն հակասում Սահմանադրության 14.1 հոդվածին և չեն կարող դիտվել որպես խտրականություն, քանի որ ողջամտորեն թելադրված են հասարակության և պետության անվտանգության պահանջներով:

Համաձայն Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ **«Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:**

Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին»:

Սահմանադրությամբ ամրագրված այս սկզբունքների անտեսմամբ ընդունված ցանկացած օրենք կամ իրավական ակտ ենթակա է անվավեր ճանաչման որպես Սահմանադրությանը հակասող: Այդ առումով օրենքներում և իրավական այլ ակտերում հատկապես կարևորվում է խտրականության բացառումը, իրավունքների և ազատությունների սահմանափակումն օրենքով՝ միայն Սահմանադրությամբ թույլատրված շրջանակներում:

Անխտրականությունը որպես սկզբունք հիմնականում ամրագրվում է բոլոր օրենսգրքերով և օրենքներով: Դրանցից կարևորում ենք հետևյալները.

բ-2 ՀՀ քաղաքացիական օրենսգիրք՝ /այսուհետ՝ Օրենսգիրք/

ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է՝ «Քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքի վրա»:

Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանվում է՝

«1.Քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը /քաղաքացիական իրավունակություն/ բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասար:

2. Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ»:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, «քաղաքացի» հասկացությունը Օրենսգիրքն օգտագործում է ոչ թե միայն ՀՀ քաղաքացիների համար, այլ ֆիզիկական բոլոր անձանց համար՝ անկախ քաղաքացիությունից:

բ-3 ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք /այսուհետ՝ Օրենսգիրք/-

ընդունվել է 1998թ. հունվարի 17-ին, ուժի մեջ է 1999թ. հունվարի 1-ից:

Օրենսգիրքը կարգավորում է այնպիսի կարևորագույն իրավունքի իրականացումը, ինչպիսին է դատական պաշտպանության իրավունքը: Հետևաբար, Օրենսգիրքը պետք է

երաշխավորի դատական պաշտպանության իրավունքից օգտվելու հավասար հնարավորություն յուրաքանչյուրի համար:

Համաձայն Օրենսգրքի 2-րդ հոդվածի՝ «Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար»:

Մեջբերված նորմը դատարան դիմելու իրավունքը չի պայմանավորում անձի որևէ տարբերակող հատկանիշով, այդ իրավունքը վերապահում է անձին ընդ հանրապետ:

Օրենսգրքի 5-րդ հոդվածը վերնագրված է «Հավասարությունն օրենքի և դատարանի առջև»: Հոդվածով սահմանվում է՝ «Քաղաքացիական գործերով արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև՝ քաղաքացիների ու իրավաբանական անձանց հավասարության սկզբունքների հիման վրա»:

Օրենսգրքի հետագա նորմերը կառուցված են նույն սկզբունքով այն հաշվով, որ դատավարության մասնակիցների նկատմամբ բացառվի խտրականությունը:

բ-4 ՀՀ Քրեական օրենսգիրք /այսուհետ՝ Օրենսգիրք/-
ընդունվել է 18.04.2003թ., ուժի մեջ է 2003թ. Օգոստոսի 1-ից:

Այս Օրենսգրքով է միայն, որ հանրության կողմից անթույլատրելի համարվող արարքը կարող է որակվել որպես հանցանք և նախատեսել իրավունքներից ու ազատություններից զրկում կամ սահմանափակում որոշակի ժամկետով: Հետևաբար, հատկապես կարևորվում է անխտրական մոտեցման սկզբունքը:

Օրենսգրքի 4-րդ հոդվածով ամրագրված է՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը հիմնվում է օրինականության, օրենքի առջև հավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատասխանատվության անհատականացման ու մարդասիրության սկզբունքների վրա»:

Օրենսգրքի 6-րդ հոդվածը, վերնագրված լինելով «Օրենքի առջև հավասարության սկզբունքը», սահմանում է՝

«Հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծնունդից կամ այլ դրությունից»:

բ-5 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք /այսուհետ՝ Օրենսգիրք/-

ընդունված 1998թ. Հուլիսի 1-ին, ուժի մեջ է 1999թ. Հունվարի 12-ից:

Օրենսգիրքը սահմանում է հանցագործության դեպքերով կատարվող քննության կարգն ու պայմանները մինչդատական և դատական վարույթում, վարույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները, անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգն ու հիմքերը և այլ հանգամանքներ, որոնք վերաբերում են անձանց իրավունքներին և ազատություններին: Հետևաբար, այս գործընթացներում խտրականության ցանկացած դրսևորում կարող է հանգեցնել անձանց իրավունքների անօրինական սահմանափակման:

Օրենսգրքի 7-րդ հոդվածը վերաբերում է օրինականության սկզբունքին: Հոդվածի 2-րդ մասով ասված է՝ «**ոչ ոք չի կարող քրեական գործով ձերբակալվել, խուզարկվել,**

կալանավորվել, դատապարտվել, ենթարկվել բերման և դատավարական հարկադրանքի այլ միջոցների, ինչպես նաև իրավունքների ու ազատությունների այլ սահմանափակումների այլ կերպ, քան օրենքով սահմանված հիմքերով և կարգով»:

Հոդվածն օգտագործում է «ոչ ոք» հասկացությունը, ինչը նշանակում է, որ տվյալ սկզբունքը ենթակա է կիրառման յուրաքանչյուրին նկատմամբ՝ առանց խտրականության:

Այդ մասին ուղղակի է ասված Օրենսգրքի 8-րդ հոդվածում, ըստ որի՝ «Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»:

բ-6 ՀՀ Քրեակատարողական օրենսգիրք /այսուհետ՝ Օրենսգիրք/-

ընդունվել է 24.12.04թ., ուժի մեջ է 10.02.05 թվականից:

Օրենսգիրքը կարգավորում է քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների պահման, դատարանի նշանակած պատժի իրականացման հետ կապված հարաբերությունները, և խտրականության հարցն այս հարաբերություններում հատկապես կարևորվում է անազատության մեջ պահվող անձանց նկատմամբ խտրական մոտեցումների ռիսկայնությամբ:

Օրենսգրքի 5-րդ հոդվածով, որպես քրեակատարողական օրենսդրության սկզբունք, ամրագրված է՝ «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը հիմնվում է մարդասիրության, օրինականության, օրենքի առջև դատապարտյալների հավասարության, պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, պատիժների և ուղղման միջոցների գույակցման սկզբունքների վրա»:

«Պատիժների կատարումը տարբերակելու և անհատակա-նացնելու» արտահայտությունները կարող են խտրականությ-յան տպավորություն ստեղծել այն դեպքում միայն, եթե հավասարությունը դիտելու լինենք որպես բացարձակ կատեգորիա:

Տարբերակված մոտեցումների և դրանք որպես խըտ-րականություն չդիտրկելու մասին կխոսվի սույն ձեռնարկի առանձին բաժնում:

Այստեղ կարևորում ենք նաև Օրենսգրքի 8-րդ հոդվածը, ըստ որի՝ **«Պատիժը կատարելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:**

Խտրականությունն արգելող սկզբունքներ ամրագրված են նաև Հայաստանի Հանրապետության բոլոր այլ օրենս-գրքերով:

բ-7. «Վարչարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը /այսուհետ՝ Օրենք/-
ընդունվել է 18.02.04թ. ուժի մեջ է 31.12.04 թվականից:

Այս Օրենքը հատկապես կարևորվում է այն առումով, որ կարգավորում է վարչական մարմինների հարաբերու-թյունները ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ: Նման հարաբերություններում խտրականության ռիսկերի առկայությունը նկատի ունենալով է, որ օրենքը, որպես սկզբունքներ, սահմանել է.

6-րդ հոդվածի, 2-րդ մասում ամրագրված է՝ **«Հայեցողա-կան լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքա-ցու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպա-**

նության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ»:

7-րդ հոդված՝ «1.Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է խուսափել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում»:

Ինչպես տեսնում ենք, Օրենքի այս հոդվածներով վարչական մարմինը պարտավորեցվում է օրենքը կիրառելիս հավասար մոտեցում ցուցաբերել մարդու և քաղաքացու /յուրաքանչյուրի/ նկատմամբ՝ իրավունք ունենալով տարբերակել միայն փաստական հանգամանքները:

Օրենքի առջև հավասարությունը, խտրականության անթույլատրելիությունը որպես Սահմանադրական սկզբունք դրաված է նաև ՀՀ այլ օրենքների և իրավական ակտերի հիմքում:

3. Խտրականության դրսևորման ձևերը

3.1 Խտրականությունն իրավական ակտում

Ընդունելով, որ խտրականությունն իրավունքի տրամադրման, պարտականություններից ազատման մերժումն է սեռի, ռասայի, ազգության, մաշկի գույնի, քաղաքական հայացքների, կրոնական համոզմունքների, սոցիալական դրության կամ այլ հատկանիշներով, չենք կարող անխտրական համարել այնպիսի իրավական ակտը, որում նման տարբերակումները, նման դրսևորումները ներառված են որպես տվյալ օրենքի կամ այլ իրավական ակտի տարր, որպես իրավական նորմ:

Սա այն դեպքն է, երբ խտրականությունն ամրագրված է օրենքով կամ այլ իրավական ակտով: Բացառված չէ, որ խտրականության շարքին դասվող նման տարբերակումը ամրագրված լինի հենց տվյալ երկրի Սահմանադրությամբ: Եթե երկրի Սահմանադրությունը չի պարունակում խտրականությունն արգելող նորմեր, հնարավոր է դառնում այնպիսի իրավական ակտերի ընդունումը, որոնք պարունակում են խտրականություն անհատի կամ անհատների առանձին խմբերի միջև:

Օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների 1787 թվականի Սահմանադրության սկզբնական տարբերակը չէր բացառում ռասայական խտրականությունը ռասայի հատկանիշով: Այն, որ Սահմանադրությունը չէր բացառում ստրկությունը, արդեն ամեն ինչ ասված է: Այդ դրսևորումների էությունն առավել ակնառու է ԱՄՆ Գերագույն դատարանի տարբեր ժամանակներում ընդունած որոշումներից, որոնցից մի քանիսն այստեղ ներկայացվում են:

3.1.1 ԱՄՆ-ի Գերագույն դատարանի մտտեցումները խտրականության դրսևորումներին.

ԱՄՆ-ի Գերագույն դատարանի ընդունած ակտերը, որոնք ընդունվել են խտրականությանը վերաբերող խնդիրներով, ուսանելի են այն առումով, որ ներառում են օրենսդրության զարգացման գործընթացները և խտրականության խնդրին հասարակության մտտեցումները ժամանակագրական առումով:

1/ 1896 թվականին Պլեսսին ընդդեմ Ֆերգյուսոնի գործով

ԱՄՆ-ի Գերագույն դատարանը ռասայական խտրականություն պարունակող չի համարել Լուիզիանա նահանգի այն օրենքը, որով երկաթուղային փոխադրողները պարտավորեցված են եղել ապահովել միևնույն կահավորանքով՝ սակայն առանձին վագոններ սպիտակ և սևամորթ ուղևորների համար: Փաստորեն արգելվում էր տարբեր մաշկի գույն ունեցող ուղևորներին նույն վագոնում ճամփորդելը:

Սևամորթ ուղևոր Պլեսսին, տեղ զբաղեցնելով սպիտակամորթների համար հատկացված վագոնում, հրաժարվում է ազատել վագոնը, որի պատճառով հարկադրաբար դուրս է բերվում ռասիկանների միջոցով և տարվում դատարան՝ երկաթուղում ռասայական տարբերակման /սեգրեգացիա/ մասին օրենքը խախտելու մեղադրանքով:

Պաշտպանության կողմը գտնում էր, որ այդպիսի տարբերակում սահմանող օրենքի և Սահմանադրությամբ ամրագրված օրենքի առջև հավասարության սկզբունքի միջև առկա է հակասություն, որ օրենքը պարունակում է խտրականություն:

Դատարանի անդամների մեծ մասը տվյալ գործով գտել են, որ Լուիզանա նահանգի տվյալ օրենքը չի խախտում օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության բացառման սկզբունքը: Սահմանադրության 14-րդ ուղղումը դատարանը մեկնաբանել է հետևյալ կերպ՝

«Տասնչորսերորդ ուղղման նպատակն, անկասկած, եղել է օրենքի առջև երկու ռասաների բացարձակ հավասարության հասնելը: Սակայն իրերի անմիջական էության առումով, դրա հեղինակների մտադրությունը չէր կարող լինել մաշկի գույնից բխող տարբերությունների պարզունակ դարձնելը ոչ միայն այնպես, ինչպես կա քաղաքական հողի վրա, այլ նաև հասարակական կյանքի այլ բնագավառներում, կամ վերջապես տարբեր ռասաներ միմյանց խառնել այնպիսի պայմաններով, որը չի բավարարում երկու կողմերին էլ»:

Մա 19-րդ դարավերջի մտածողությունն էր, որով մաշկի գույնի հիման վրա իրավունքների տարբերակումը չէր համարվում խտրականություն, և հենց այդ մտածողությամբ էլ դատարանը վիճարկվող օրենքը ճանաչել է խելացի, «քանի որ այն համապատասխանում է ժողովրդի մոտ հաստատված սովորույթներին և նպաստում է բարօրության հաստատմանը, համերաշխության և հասարակական կարգի պահպանմանը»:

Այս գործով է, որ դատարանը սահմանել է «բաժանված են, սակայն հավասար են» դեմագոգիկ սկզբունքը:

Սակայն նույն գործով եղել է նաև դատավորի առանձին կարծիք, որը և հետագայում դարձել է գերիշխող, իսկ դատարանի այդ վճիռը՝ քննադատելի:

Դատավորներից Խառլանի առանձին կարծիքում ասված է. «Սահմանադրության լույսի տակ, օրենքի առջև մեր երկրում գոյություն չունի քաղաքացիների որևէ բարձրագույն, տիրապետող և կառավարող դաս: Մենք չունենք կաստաներ: Մեր Սահմանադրությունը «կույր է» մաշկի գույնի նկատմամբ, չգիտի և չի թույլատրում քաղաքացիների դասերի բաժանումը: Ամենացածր խավի մարդը հավասար է ամենահզորին: Այնտեղ, որտեղ խոսք է գնում մեր երկրի Հիմնական օրենքով երաշխավորված քաղաքացիական իրավունքների մասին, օրենքը մարդուն մոտենում է որպես

/առանձին/ անձնավորության՝ անկախ նրա գույնից...մաշկի գույնից»:

Հետագա տասը տարիների ընթացքում դատարանը մի քանի գործեր է լսել դպրոցներում ռասայական տարբերակումների վերաբերյալ: Այդ գործերով նույնպես կասկածի տակ չի առնվել Պլեասիի գործով հաստատված **«առանձին են, բայց հավասար են»** սկզբունքը: Այս գործերով անհավասարությունը տեսել են նրանում, որ տարբեր են ուսման պայմանները:

2/ 1954թ. Բրաունն ընդդեմ կրթության հանձնաժողովի գործով՝

Այս գործով դատարանն արդեն դեն է նետել **Պլեասիի գործի հիմքում դրված «առանձին են, բայց հավասար են» սկզբունքը**, և մաշկի գույնով մարդկանց բաժանումը դիտել է որպես օրենքի առջև հավասարության սկզբունքի խախտում:

Այս գործով նեգրական բնակչությունը, որի երեխաներին մերժվել է սպիտակամաշկ բնակչության երեխաների համար նախատեսված մասնավոր և հանրային դպրոցներ ընդունվելը, ձգտել է վերացնել տալ այդ տարբերակումը որպես խտրականություն: Իշխանությունները պնդելիս են եղել, որ նման տարբերակումը համապատասխանում է Սահմանադրությանը Պլեասիի գործով հաստատված **«առանձին են են, բայց հավասար են»** դատական ակտի հիմքերով:

Դատարանը գտել է, որ Պլեասիի գործից հետո անցած 60 տարիների ընթացքում զգալիորեն մեծացել է հանրակրթական դպրոցների նշանակությունը, ինչը նաև առաջ է բերում Պլեասի գործով **«առանձին են, բայց հավասար են»** մոտեցման վերանայման անհրաժեշտությունը: Այդ գործով դատարանը սահմանել է.

«Նույն տարիքի և նույն ուսումնական մակարդակի որոշ երեխաների այլ երեխաներից բացառապես նրանց

ռասայական պատկանելության հիմքերով զատելը նրանց մեջ ծնում է իրենց հասարակական դիրքի նվաստացման զգացում, ինչը կարող է անդառնալիորեն բացասաբար ազդել նրանց հոգու և գիտակցության վրա:

Այսօրվա դրությամբ նահանգների և տեղական իշխանությունների ամենակարևոր խնդիրն է համարվում լուսավորությունը: Կրթություն է պահանջվում ամենահասարակ հասարակական պարտականությունը, այդ թվում զինվորական պարտականությունը կատարելու համար: Այն հանդիսանում է լավ քաղաքացու հիմնական արժանիքը: Կրթությունն այսօր հիմնական միջոց է երեխային մշակութային արժեքները յուրացնել տալու, ապագայում մասնագիտական ուսուցման անցնելուն, միջավայրին նորմալ հարմարվելուն նախապատրաստելու համար: Մեր ժամանակներում չափազանց կասկածելի է, որ որևէ երեխա կյանքում ապագա հաջողությունների հույս ունենա, եթե նրան զրկել են կրթության հնարավորություններից»:

Դատարանը միաձայն գտել է, որ հանրակրթության համակարգում նման տարբերակումը /սեգրեգացիա/, հանդիսանում է օրենքի կողմից հավասար պաշտպանության տրամադրման ժխտում:

Մշտապես շեշտելով «այսօրը», «մեր ժամանակներում» արտահայտությունները, դատարանը փորձել է անցյալի խտրականությունը թելադրված, արդարացված համարել անցյալի հասարակական հարաբերություններով, իսկ ներկա մոտեցումները հասարակական ներկայիս պահանջով:

Այդ գործից հետո դատարանը հակասահմանադրական է ճանաչել նաև իրավական այն նորմերը, որոնք սանկցիավորում էին ռասայական սեգրեգացիան զրոսայզիներում, ռեստորաններում, հասարակական այլ վայրերում:

3/ Մեկ ուրիշ գործով Սան-Ֆրանցիսկո քաղաքում ապրող չինացուն իշխանությունները մերժել են լվացքատուն բացե-

լու թույլտվություն տալն այն հիմնավորմամբ, որ նա մտադիր է եղել լվացքատունը բացել փայտյա տնակում:

Նկատի ունենալով, որ պրակտիկայում նույն պայմաններում թույլտվություններ, այնուամենայնիվ, տրվել են սպիտակ ռասայի ներկայացուցիչներին, չինացուն թույլտվություն տալու մերժումը դատարանը գնահատել է որպես խտրականություն, նշելով որ **«Տասնչորսերոդ ուղղումը չի սահմանափակվում բացառապես ամերիկյան քաղաքացիների պաշտպանությամբ, այն կիրառելի է բոլորի նկատմամբ՝ անկախ նրանց ռասայից, մաշկի գույնից կամ ազգությունից, ինչպես նաև ուղղումը հանդիսանում է իրավունքների հավասարության երաշխիք»:**

Դատարանի կարծիքով չինացու նկատմամբ նման խտրականությունը ոչ թե օրենքի, այլ իշխանությունների մոտեցումների արդյունք է:

4/ Նույն կարգով մեկ ուրիշ գործով Գերագույն դատարանը խտրականության դրսևորում է տեսել դատարանի վճռում այն կապակցությամբ, որ խնամակալության վեճի քննության արդյունքում **երեխայի խնամակալությունը ամուսնալուծված մորից վերցվել և հանձնվել է հորը այն հիմնավորմամբ, որ մայրը հետագայում ամուսնացել է նեգրի հետ:**

Հետաքրքիր է, որ դատարանը խտրականության խնդիրներին անդրադարձել է նաև մասնավոր հարաբերությունների քննության ընթացքում: Օրինակ.

5/ 1948 թվականին դատարանը քննել է մասնավոր գանգատի գործը,

ըստ որի շրջաններից մեկի բնակիչները միմյանց հետ պայմանագիր են կնքել իրենց բնակարանները նեգրերին չվաճառելու մասին: Նրանցից մեկը, այնուամենայնիվ, իր բնակարանը վաճառել է նեգրի: Շրջանի մյուս բնակիչները

դատարան հայց են ներկայացրել առքուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով:

Գերագույն դատարանը գտել է, որ շրջանի բնակիչների՝ միմյանց հետ կնքած պայմանագիրը իրենց բնակարանները նեգրական բնակչությանը չվաճառելու մասով, խախտում է օրենքի կողմից հավասար պաշտպանություն ստանալու իրավունքը, թեկուզ և պայմանագիրն առանձին վերցույց, չի խախտում Սահմանադրությունը, քանի որ հանդիսանում է մասնավոր փաստաթուղթ:

6/ Այն, որ դեռևս 1967 թվականին ամերիկյան իրականության մեջ առկա էր ռասայական խտրականությունը, վկայում է **Լիվինգս ընդդեմ Վիրջինիայի** գործը:

Այդ ժամանակներում Վիրջինիա նահանգը, ինչպես նաև 15 այլ նահանգներ, արգելում էին սպիտակամորթի և սևամորթի ամուսնությունը: Սպիտակամորթ Վաշինգտոնում օրինական կարգով ամուսնանում է սևամորթ աղջկա հետ: Երբ նրանք վերադառնում են Վիրջինիա նահանգ, այնտեղ մեղադրվում են նահանգի օրենքը խախտելու մեջ և ազատազրկման են դատապարտվում մեկ տարի ժամանակով: Դատավորը պատժի կրումը հետաձգում է 25 տարի ժամանակով, միայն թե պայմանով, որ ամուսիններն այդ փորձաշրջանի ընթացքում չեն վերադառնա Վիրջինիա նահանգ:

Նահանգի իշխանությունները պնդում էին, որ խառը ամուսնության նման արգելքը չի կարող օրենքի կողմից հավասար պաշտպանության իրավունքի խախտում համարվել, քանի որ նման արգելքը հավասարապես վերաբերում է ինչպես սպիտակամորթներին, այնպես էլ սևամորթներին:

Դրան հակառակ, դատարանի նախագահ Էրլ Ուորենը տվյալ գործով պնդել է հետևյալ կարծիքը.

«Անցյալում մենք հետևողականորեն հրաժարվել ենք ռասայի հատկանիշներով իրավունքի մերժումը Սահմանադրությանը համապատասխան ճանաչելը: Համաձայն մեր

Մահմանադրության, յուրաքանչյուր անհատ ինքը պետք է որոշի այլ ռասայի պատկանող անձի հետ ամուսնանալու կամ չամուսնանալու խնդիրը, պետությունը չի կարող խախտել այդ ազատությունը: Կասկածի ենթակա չէ այն, որ բացառապես ռասայական տարբերության հիման վրա ամուսնության սահմանափակումը համարվում է օրենքի կողմից հավասար պաշտպանության իրավունքի խախտում»:

7/ Գերագույն դատարանի գործերից Բեկկին ընդդեմ Կալիֆորնիական համալսարանի գործը. այն լսվել է 1978 թվականին և հետաքրքիր է այն առումով, որ այստեղ տեղի է ունենում ռասայական խտրականության հակառակ պրոցեսը: Ըստ տվյալ գործի, համալսարանի բժշկական ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանողների հավաքագրման համար սահմանված է եղել երկու համակարգ՝ ընդհանուր և հատուկ: Ըստ հատուկ կարգի, յուրաքանչյուր տարի 16 տեղ հատկացված է եղել հասարակության սոցիալական խոցելի խմբերի երիտասարդներին և փոքրամասնություններին /նեգրերի, լատինամերիկացիների, ասիացիների և հնդկացիների/ խմբերին պատկանող անձանց: Այս կարգով ընդունված ոչ մի թեկնածու սպիտակամորթերի խմբին պատկանելիս չի եղել:

Սպիտակամորթ Բեկկին, որը չի անցել ուսանողների հավաքագրման ընդհանուր համակարգով, պնդել է, որ գոյություն ունեցող ընդունելության հատուկ համակարգը, որն առավելություն է տալիս այլ ռասայի պատկանող անձանց, խախտում է օրենքով հավասար պաշտպանություն ստանալու իր իրավունքը:

Դատավորների մեծ մասն անընդունելի է համարել համալսարանի ընդունելության հատուկ կարգը, չկարողանալով հիմնավորել իր մոտեցումը:

Դատավոր Բլեկմունը հայտնել է հետևյալ հատուկ կարծիքը. «Ռասիզմը բացառելու նպատակով, այնուամենայնիվ, մենք պետք է նկատի ունենանք ռասայական գործոնը: Չկա այլ միջոց: Որպեսզի որոշ մարդկանց համար ապահովվի հավասար մոտեցում, մենք պետք է նրանց վերաբերվենք այլ կերպ, քան մյուսներին: Մենք չենք կարող և չպետք է թույլ տանք, որ օրենքով հավասար պաշտպանության իրավունքը ուժեղացնի ռասայական գերիշխանության առկայությունը»:

Այս հատուկ կարծիքին հարկ կլինի անդրադառնալ, երբ կխոսվի այն տարբերակումների մասին, որոնք չեն համարվում խտրականություն:

8/ Նույնանման խնդրի դատարանը բախվել է նաև 1989 թվականին լավաձ Ռիչմոնդ քաղաքն ընդդեմ Ա. Կրոսոն ընկերության գործով:

Ըստ այդ գործի, քաղաքային իշխանությունները հաստատել են շինարարական պայմանագրերի մի ծրագիր, որով նախատեսվել է՝ ենթակապալուների հետ կնքվող պայմանագրերի 30 տոկոսը վերապահել որոշ փոքրամասնությունների ներկայացուցիչներին /մասնավորապես նեգրեր, լատինաամերիկացիներ և հնդկացիներ/: Նման պայմանագրերը նախատեսվել են հանրային սպասարկման օբյեկտների շինարարության համար:

Այդ ծրագրի հաստատմանը նախորդել է ուսումնասիրություն և պարզվել է, որ նախորդ նման շինարարությունների շուրջը կնքված պայմանագրերի միայն մեկ տոկոսին է, որ մասնակցություն են ունեցել նեգրական ընկերություններն այն դեպքում, որ նեգրերը կազմում են բնակչության 50 տոկոսը:

Տվյալ գործով որևէ ապացույց չի եղել այն մասին, որ նման պայմանագրեր կնքելիս քաղաքային իշխանությունները կամ գլխավոր կապալառուները նեգրերի նկատմամբ միտումնա-

վոր կիրառել են խտրականություն, չի ուսումնասիրվել այն հարցը, թե շինարարության բնագավառի որքան նեգր մասնագետներ կան և ընդհանրապես նեգրերին պատկանող որքան նման մասնագիտացված կազմակերպություններ կան:

Դատավորների մեծամասնության կարծիքը տվյալ գործով եղել է հետևյալը.

«Եթե ընդունելու լինենք Ռիչմոնդ քաղաքի փաստարկներն այն մասին, որ հենց միայն նախկինում գոյություն ունեցած խտրականության փաստը բավարար է ռասայական կոշտ գերակայություն սահմանելու համար, ապա դա նախկինում իրավագրված խմբի յուրաքանչյուր հնարավորություն կտա «փոխհատուցելիս հատուցման առավելություն» տրամադրելու պահանջ ներկայցնելու համար: Հավասար իրավունքներով օժտված և հնարավորություններն ու հաջողությունները ռասայով չպայմանավորված հասարակությունում ապրող ժողովրդի կենսակերպը կփոշիանար փոփոխական և գնահատման չտրվող նախկինում տեղի ունեցած անարդարության դիմաց փոխհատուցման չափի գնահատման գծապատկերում: Մեր կարծիքով այդպիսի մոտեցումը չի համապատասխանում սահմանադրական դրույթի տառին և ոգուն, որի գլխավոր իմպերատիվն է հավասարությունը»:

9/ 1971 թվականին դատարանը լսել է Ռիիդի գործը,

որը կապված էր օրենքում պարունակող խտրականության հետ՝ պայմանավորված սեռի հատկանիշով:

Հարցը նրանում է, որ Այդահո նահանգի օրենքը նախատեսում էր, որ երբ խնդիր էր առաջանում ընտրելու մահացածի գույքի կառավարիչ, մշտապես պետք է ընտրել տղամարդ թեկնածուի, թեկուզ և առաջարկվող կինն օժտված լինի առավել մեծ մասնագիտական կարողություններով:

Դատարանն այդ օրենքը ճանաչել է հակասահմանադրական:

10/ 1973 թվականին դատարանը լսել է տիկին Շերոն Ֆրոնտերոնի գործը.

դիմողը վիճարկելիս է եղել Նահանգների օրենքն այն մասին, որ ամուսինն իրավունք ունի կնոջը վկայակոչելու որպես իր խնամքի տակ գտնվողի՝ անկախ այն բանից իրականում ի՞նքն է հոգում կնոջ խնամքը, թե՞ ոչ: Մինչդեռ կինը ամուսնուն իր խնամքի տակ գտնվելու հանգամանքը հաստատելու համար պետք է ապացուցի, որ ամուսնու ապրուստի առնվազն 30 տոկոսը հոգում է ինքը:

Դատարանը ձայների մեծամասնությամբ տվյալ նորմը ճանաչել է որպես հակասահմանադրական: Մակայն առկա են եղել նաև դատավորների առանձին կարծիքներ այն մասին, որ նկատի պետք է առնել «Իրավունքների հավասարության մասին» ուղղումը նահանգների մեծ մասի կողմից վավերացրած չլինելու հանգամանքը և սեռի հատկանիշով տարբերակում կիրառելու կամ չկիրառելու հարցը պետք է թողնել նահանգներին:

Այս գործի կապակցությամբ ասվել է նաև, որ **նախորդ հարյուրամյակի զգալի մասի ընթացքում կանանց վիճակն Ամերիկայում շատ դեպքերում կարելի է համեմատել ստրկության շրջանում նեգրերի վիճակի հետ: Կանայք չէին կարող պաշտոն զբաղեցնել պետական մարմիններում, տեղ զբաղեցնել ատենակալների կազմում, դատարան դիմել իրենց անունից, հանդիսանալ սեփական երեխաների խնամակալ: Ամուսնացած կինը զրկված էր սեփականության տիրապետման կամ փոխանցման իրավունակությունից:**

Այսպիսի ավանդույթներով դաստիարակված հասարակության դատարանի համար, բնականաբար, դժվար էր գնալ կտրուկ գնահատականների, ինչը պետք է հանգեցներ նույնպես կտրուկ փոփոխությունների: Նման գործերով հետագա դատական ակտերը նպատակաուղղված են եղել ոչ միայն

սեռի հատկանիշով խտրականության արգելմանը, այլ նաև խտրականության հետևանքների վերացմանը:

11/ Այդ առումով հատկանշական է տրանսպորտային գործակալության դեմ 1987 թվականին լաված գործը, որտեղ խոսքն այն մասին էր, որ «Քաղաքացիների իրավունքների մասին» 1964 թվականի օրենքի համաձայն, դիսպետչերի պաշտոնում աշխատանքի ընդունելիս առավելությունը տրվում էր կանանց, թեկուզ ն ավելի ցածր մասնագիտական կարողություններով:

Նման տարբերակված մոտեցումը պատճառաբանվել է նրանով, որ այդ պաշտոնում կանանց տոկոսային հարաբերությունը չափազանց ցածր էր:

Դատարանը նման տարբերակումը համարել է արդարացված՝ գտնելով, որ նման տարբերակմամբ հետապնդվող նպատակը ուղղված է անընդունելի ավանդույթներով ձևավորված խտրականության հետևանքների վերացմանը:

12/ Նույն մոտեցումն է ունեցել դատարանը նաև 1974 թվականին մեկ այլ գործով, երբ վիճարկվելիս է եղել Ֆլորիդա նահանգի հարկային օրենքը, որով հարկային արտոնություններ նախատեսվում էր միայն այրի կանանց համար:

Դատարանը նման տարբերակումը համարել է սահմանադրական այն հինավորմամբ, որ դա հատուցում է նախկինում կանանց նկատմամբ կիրառված խտրականության դիմաց:

Այդ գործով, որպես առանձին կարծիք, եղել են նաև այլ մոտեցումներ այն առումով, որ նման տարբերակումը կնշանակեր, որ այդպիսի տարբերակմամբ շեշտում են ընդունում ենք կանանց թույլ սեռի պատկանելու զաղափարը, որն ինքնին կարդարացնի խտրական մոտեցումներն այլ բնագավառներում:

13/ Այդ բնույթի գործերից է նաև 1982 թվականին դատարանի լսած **Խոզենն ընդդեմ Միսիսիպիի կանանց համալսարանի**:

Բուժքույրերի պատրաստման բարձրագույն դպրոցը նախատեսված է եղել բացառապես կանանց համար:

Ջոն Խոզենին տվյալ ուսումնական հաստատությունում ընդունելը մերժվել է նրա արական սեռի պատկանելության հիմքերով:

Գտնելով, որ սահմանված նման կարգը պարունակում է խտրականություն, որով խախտվում է իր սահմանադրական իրավունքը, նա դիմել է դատարան:

Դատաքննությամբ հաստատված է համարվել այն հանգամանքը, որ երբեք սահմանափակված չի եղել կանանց ընդունելությունը բուժքույրական ուսումնական հաստատություններում, որ բուժքույրական հաստատությունում դիպլոմ ստացածների 94 տոկոսը, իսկ ամբողջ երկրում՝ 98 տոկոսը եղել են կանայք:

Այստեղից հետևում է, որ կանանց համար տվյալ բնագավառում հավասար հնարավորություններ ապահովելու անհրաժեշտությունը չի հիմնավորված:

Ելնելով կրթություն ստանալու՝ յուրաքանչյուրի հավասար հնարավորություն ունենալու սկզբունքից, Գերագույն դատարանը տվյալ կարգը գնահատել է որպես հակասահմանադրական, իսկ Խոզենի սահմանադրական իրավունքը՝ խախտված:

Այս գործով հետաքրքիր է մեծամասնության գնահատականը, որի հեղինակն է դատավոր Սանդրա Դեյ Օ՝ Կոննորը.

«Տղամարդկանց չընդունելու վերաբերյալ դպրոցի վարած քաղաքականությունն ամրապնդում է այն կարծրատիպը, որ բուժքրոջ մասնագիտությունը բացառապես կանացի զբաղմունք է: Կանանց համար բուժքույրական դպրոցում առավելագույն քանակով տեղեր ապահովելու քաղաքակա-

նությունը մեծ հավաստիություն է հաղորդում այն հնառճ տեսակետին, որ հատկապես կանանց, այլ ոչ թե տղամարդկանց պետք է պատրաստել բուժքույրական մասնագիտության համար, իսկ այդպիսի նախադրյալն ունի ինքնաիրացման իմաստաբանություն»:

Այս վերջին գործերով դատարանի մոտեցումները, դատավորների ներկայացրած առանձին կարծիքներն արդեն վկայություն են այն բանի, որ 20-րդ դարի վերջերին է միայն, որ վերջնականապես անընդունելի է համարվել խտրականությունը ռասայի, սեռի, ազգային պատկանելության և մյուս այլ հատկանիշներով: Վեճն արդեն տեղափոխված է այլ հարթություն, թե խտրականությունը հաղթահարելուն ուղղված այս կյամ այն տարբերակումը որքանով է ողջամիտ և արդյոք ք չի պարունակում խտրականության տարրեր:

3.1.2 Մարդու իրավունքների Կոմիտեի և Եվրոդատարանի մոտեցումները

Այս և մյուս բոլոր առումներով ՄԱԿ-ի և Եվրոխորհրդի անդամ պետությունների համար կարևոր նշանակություն ունեն ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի /այսուհետ՝ Կոմիտե/ և Եվրոդատարանի որոշումները, որոնցով անդրադարձ է կատարվել իրավունքի այնպիսի խնդիրների, որոնք սկզբունքային են համընդհանուր բարեկեցության ձրգտող հասարակությունների համար:

Մարդու իրավունքների Կոմիտեի մոտեցումները

Խտրականության խնդիրներին նվիրված գործերով Կոմիտեն պարզաբանել է հետևյալը, որ համաձայն Ֆակուլտատիվ արձանագրության, «Դաշնագիրը, ի տարբերություն Իրավունքների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի, չի արգելում խտրականությունը Կոնվենցիայով պաշտպանվող

այլ իրավունքներն իրականացնելիս, այլ խտրականությունից ազատ լինելը սահմանում է որպես առանձին իրավունք»:

«Կոմիտեն ընդգծում է, որ դիֆերենցացումը, որը հիմնված է խելամիտ և օբյեկտիվ չափանիշների վրա, խտրականությունը չի դարձնում արգելվող:

Կոմիտեն համարում է, որ «դիսկրիմինացիա» /խտրականություն/ արտահայտությունը, ինչպես այն օգտագործված է Դաշնագրում, պետք է հասկանալ որպես ցանկացած տարբերակում, որը բացառում է ամեն մի տարբերակում, բացառություն, սահմանափակում կամ գերապատվություն՝ հիմնված ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային դրության կամ այլ հանգամանքի վրա, որը նպատկ ունի կամ հետապնդում է կամ նպատակ ունի չեզոքացնելու կամ նվազեցնելու բոլոր անձանց կողմից իրավունքների և ազատությունների հավասարության սկզբունքներով ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը»:

Խտրականությանը նվիրված գործերից, որոնք լսվել են Կոմիտեի կողմից, բնութագրական ենք համարում հետևյալները.

1/ 09.04.1981թ.՝ Մավրիկյացի 19 կանանց դիմումն ընդդեմ Մավրիկիայի կառավարության գործը:

Այս գործով դիմող կանայք վիճարկել են Մավրիկիայի 1977 թվականի «Դեպորտացիայի մասին» օրենքը, ըստ որի մավրիկիացի տղամարդու օտարերկրացի կինը Մավրիկիայում բնակվելու իրավունք էր ստանում, մինչդեռ մավրիկիացի կնոջ օտարերկրացի ամուսինը նման իրավունք ստանալ չէր կարող և ենթակա էր դեպորտացիայի:

Կոմիտեն անընդունելի է համարել պատասխանող կառավարության այն պնդումը, թե նման տարբերակումը բխում է հասարակության անվտանգության շահերից և օրենքը

գնահատել է որպես սեռի հատկանիշներով խտրականություն պարունակող:

2/ 09.04.1987թ. Զվեն դե Վիրեսն ընդդեմն Նիդեռլանդների գործը:

Դիմումատուն վիճարկել է Նիդեռլանդների «Գործազրկության նպաստների մասին» օրենքի այն դրույթը, ըստ որի գործազրկության նպաստ ստացող կանայք ամուսնանալու դեպքում զրկվում են նման նպաստից: Մինչդեռ տղամարդիկ այդ իրավունքը պահպանում են նաև ամուսնությունից հետո:

Նիդեռլանդների կառավարության պատասխանում պնդվում էր, որ տղամարդն ի վիճակի է հոգալու չաշխատող կնոջ կարիքները, ինչը չի կարելի ասել կնոջ դեպքում:

Կոմիտեն չի համաձայնվել պատասխանող կառավարության հիմնավորումների հետ և գործող օրենքը գնահատել է որպես սեռի հատկանիշներով խտրականություն պարունակող:

3/ Հետաքրքիր է նաև 04.04.1988 թ. Կառլ Հենիկ Բլումն ընդդեմ Շվեդիայի գործը:

Դիմումատուն սովորել է մասնավոր դպրոցում: Դիմել է կառավարությանը նյութական օգնություն ստանալու համար՝ «Կրթություն ստանալիս նյութական օգնություն ստանալու մասին» դեկրետի հիմքերով, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, որ տվյալ ուսումնական հաստատության ծրագրերը պետական հաստատում չեն ստացել:

Ըստ հիշատակված դեկրետի, պետական ուսումնական հաստատություններում սովորողներին պետությունը տրամադրում է նյութական օժանդակություն:

Դիմումատուն պատճառաբանել է, որ ինքն իրականացրել է կրթություն ստանալու իր սահմանադրական իրավունքը և

այն հավասարապես պետք է պաշտպանված լինի առանց խտրականության:

Պատասխանողն իր մերժումը պատճառաբանել է նրանով, որ օրենքը հավասար պաշտպանություն է ապահովում բոլոր նրանց համար, ովքեր սովորում են պետական ուսումնական հաստատություններում կամ մասնավոր այնպիսի հաստատություններում, որոնց ուսումնական ծրագրերը հաստատված են պետության կողմից և ենթարկվում են պետական վերահսկողության՝ պատշաճ կրթական մակարդակ ապահովելու նպատակով: Դիմումատուն չի կարող խտրականության զոհ համարվել, քանի որ գրկված չի եղել պետական հովանավորություն վայելող հաստատությունում սովորելու իրավունքից:

Կոմիտեն համաձայնվել է պատասխանողի հիմնավորումների հետ, նման տարբերակված մոտեցումը գնահատել է խելամիտ և հանրային շահին համապատասխան, օրենքը ոչ մի հատկանիշով չի համարել խտրականություն պարունակող:

4/ 03.04.1989թ. Սենեգալի կենսաթոշակի անցած 742 զինծառայողներն ընդդեմ Ֆրանսիայի գործով:

Սենեգալը, լինելով Ֆրանսիայի գաղութը, անկախություն է ստացել 1960 թվականին:

Ֆրանսիայի բանակում ծառայող սենեգալցի զինվորականները կորցրել են Ֆրանսիայի քաղաքացիությունը, սակայն անցնելով կենսաթոշակի, կենսաթոշակը ստացել են Ֆրանսիական պետությունից:

742 սենեգալցի կենսաթոշակի անցած զինծառայողներ դիմել են Կոմիտեին այն կապակցությամբ, որ «Կենսաթոշակների մասին» Ֆրանսիական օրենքով կենսաթոշակի անցած Ֆրանսիայի քաղաքացի զինծառայողներն ստանում

են ավելի բարձր կենսաթոշակ, քան Սենագալի քաղաքացիները՝ թեկուզ և ծառայել են հավասար պայմաններում:

Այս դեպքում օրենքում առկա խտրական մոտեցումը կատարված էր քաղաքացիության հիմքով:

Կոմիտեն, նշելով, որ Դաշնագիրը քաղաքացիությունը խտրականությունն արգելող հիմքերում թեկուզ և չի թվարկել, այնուամենայնիվ այն նույնպես նման հիմքերում ներառելի է, քանի որ Դաշնագիրը թվարկվածների հետ միասին թույլատրել է խտրականություն տեսնել նաև այլ հիմքերով արված տարբերակումների դեպքերում: Քաղաքացիության հիմքով նման չարդարացված տարբերակումը Կոմիտեն գնահատել է որպես խտրականություն:

5/ 03.11.1999թ. Ֆրեդրիկ Ֆունեն ընդդեմ Ֆրանսիայի գործով.

Դիմումատուն կրոնական համոզմունքների հիմքերով ազատվել է զինվորական ծառայությունից և ուղարկվել է այլընտրանքային քաղաքացիական ծառայության, որի ժամկետն օրենքով սահմանված է երկու տարի:

Նկատի ունենալով, որ զինվորական ծառայությունը սահմանված է մեկ տարի, դիմումատուն քաղաքացիական ծառայության մեկ տարին անցնելուց հետո լքել է ծառայության վայրը, որի համար կանչվել է քրեական պատասխանատվության և դատապարտվել է ազատազրկման մեկ տարի ժամանակով:

Դիմումատուն Կոմիտեին դիմել է օրենքի խտրական լինելու առումով:

Կոմիտեն Ֆրանսիայի այդ օրենքը գնահատել է որպես կրոնական համոզմունքների հիմքերով խտրականություն պարունակող:

6/ 19.07.1995թ. Ալինա և Յարոսլավ Միմենյոկներն ընդդեմ Չեխիայի հանրապետության գործով.

Դիմումատուները 1968 թվականի Չեխոսլովակյան հայտնի դեպքերի կապակցությամբ հեռացել են երկրից, բնակություն են հաստատել արտասահմանում, իսկ Չեխոսլովակիայի դատարանը հեռակա կարգով նրանց դատապարտել է ապօրինի էմիգրացվելու հիմքերով և նրանց անշարժ գույքը բռնագրավել է:

Դիմումատուները 1990 թվականին արդարացվել են, համարվել են բռնադատվածներ:

Չեխիայի Հանրապետությունը 1991 թվականին ընդունել է օրենք՝ նախկինում բռնադատված անձանց գույքը, որը բռնագրավվել է բռնադատման կապակցությամբ, վերադարձրնելու մասին: Նախատեսվել է վերադարձնել բռնագրավված գույքն այն անձանց միայն, որոնք Չեխիայի կամ Սլովակիայի քաղաքացի են և մշտապես բնակվում են դրանց տարածքում:

Դիմումատուներն ընդունած են եղել այլ երկրի քաղաքացիություն, բնակվելիս են եղել Ֆրանսիայում և այդ հիմքով նրանց դիմումը՝ իրենցից բռնագրավված բնակարանը վերադարձնելու մասին, մերժվել է:

Կոմիտեն այս դեպքում նույնպես նման չարդարացված տարբերակում պարունակող օրենքը գնահատել է որպես քաղաքացիության հիմքերով խտրականություն նախատեսող:

3.1.3 Եվրոդատարանի մոտեցումները խտրականության հարցերի նկատմամբ:

Ի տարբերություն Մարդու իրավունքների կոմիտեի, որը գործերի քննությունն իրականացնում է Դաշնագրի նորմերի խախտման հիմքերով և խտրականությանը վերաբերող նորմերը դիտարկում է անկախ իրավունքի այլ նորմերց, Եվրոդատարանը բողոքների քննությունն իրականացնում է Եվրո-

կոնվենցիայի նորմերի պահանջների խախտման հիմքերով: Կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որը վերաբերում է խտրակա-
նության բացառման պահանջին, Եվրոդատարանն անդրա-
դառնում է՝ այն դիտարկելով որպես իրավունք սահմանող
նորմի բաղկացուցիչ մաս, որպես առանց խտրականության
իրավունքի պաշտպանության տրամադրման պահանջ:

Խտրականության խնդիրների նկատմամբ Եվրոդատարա-
նի մոտեցումներն առավել տեսանելի են կոնկրետ գործերով
կայացված որոշումներում: Այսպես՝

**1/ 08.06. 1976 թվականին լավել է էնզելը և մյուսներն
ընդդեմ Նիդեռլանդների գործը:**

Դիմումատուները, լինելով զինծառայողներ, կարգապա-
հական տույժի կարգով ենթարկվել են կալանքի և պահվել են
տարբեր պայմաններում:

Դիմումատուները վիճարկել են իրենց նկատմամբ կիրառ-
ված կարգապահական տույժերի հիմքում դրված օրենքն այն
հիմքով, որ վարչական կալանքը թույլատրելի չի կարող
համարվել վարչական մարմնի, տվյալ դեպքում հրամանա-
տարի որոշմամբ, որ իրենց նկատմամբ առկա է եղել խտրա-
կան մոտեցում:

Դիմումատուներից մեկի նկատմամբ կարգապահական
տույժը կիրառվել է այն պատճառով, որ նա, որպես զինվորա-
կան թղթակից, մամուլում հանդես է եկել բանակային
կարգերի քննադատությամբ: Այս դիմումատուն գտել է, որ
խախտվել է խոսքի ազատության իր իրավունքը և քաղաքա-
ցիական թղթակիցների համեմատությամբ ինքը դրվել է
խտրական վիճակում:

Այս գործով Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում
տեսնելու դեպքում, այն պետք է դիտարկվեր այլ իրավունք-
ների խախտման համակցությամբ, օրինակ՝ խոսքի ազա-
տության իրավունքի խախտում տեսնելու դեպքում կամ
պատժի անհամաչափության համակցությամբ, քանի որ

վիճարկվում էր նույն խախտման և նույն պատժի համար, ելնելով զինվորական կոչումից, կիրառվում էին պատժի կրման տարբեր պայմաններ:

Գտնելով, որ կարգապահական պատասխանատվության տարբերակումը, ինչպես նաև խոսքի ազատության սահմանափակումը պայմանավորված և արդարացված է զինվորական ծառայության առանձնահատկություններով, դատարանը Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում չի արձանագրել:

2/ 07.02.1976 թվականին լսվել է Կելդսենը, Բուսկ Մադսենը և Պեդերսենը ընդդեմ Դանիայի գործը:

Դիմումատուները՝ որպես դպրոցում սովորող երեխաների ծնողներ, պնդել են, որ դպրոցներում տարվող սեռական դաստիարակությունը հակասում է իրենց քրիստոնեական կրոնական համոզմունքներին: Նրանք պնդել են, որ հանդիսանում են Կոնվենցիայի թիվ մեկ արձանագրության 2-րդ հոդվածի /Կրթության իրավունք/ և Կոնվենցիայի 14-րդ հոդվածի /խտրականության արգելում/ խախտման զոհեր: Խտրականությունը նրանք տեսնում էին նրանում, որ սովորողներն, օրինակ, կրոնի առարկայի ուսուցմանը մասնակցելու համար ունեն ազատ ընտրության իրավունք, իսկ այս դեպքում նման ազատությունը սահմանափակված է:

Այս դեպքում նույնպես դատարանը կարող էր Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում տեսնել, եթե համարեր, որ խախտված են թիվ մեկ արձանագրության 2-րդ հոդվածի պահանջները:

Այդ կապակցությամբ Դատարանը պարզաբանել է հետևյալը.

«.....14-րդ հոդվածը՝ երաշխավորված իրավունքների և ազատությունների շրջանակներում, արգելում է խտրական մոտեցումն այնպիսի անձնական առանձնահատկություն-

ներով, որոնք մարդկանց կամ մարդկանց խմբերին տարբերում են միմյանցից: Մակայն վիճարկվող օրենսդրությունում չկա ոչինչ, որը տեղիք կտար ենթադրելու, որ այն նախատեսում է նման տարբերակում:

Առավել ևս դատարանն ընդունում է, որ կա էական տարբերություն կրոնական դաստիարակության և սեռական կրթության միջև, որի մասին խոսվում է սույն գործով: Առաջինը, ըստ որոշման, ծառայում է դոգմաների, այլ ոչ թե ուղղակի գիտելիքների տարածմանը. Դատարանն արդեն սահմանել է, որ դա չի համընկնում վերջինին: Համապատասխանաբար, տարբերակումը, որի դեմ առարկում են դիմողները, հիմնվում է տարբեր փաստական հանգամանքների վրա և համապատասխանում է 14-րդ հոդվածի պահանջներին»:

3/ 28.11.1978 թվականին լսվել է Լուդիկեն, Բելկասեմը և Կոչն ընդդեմ Գերմանիայի ֆեդերատիվ հանրապետության գործը:

Դիմումատուները, լինելով ոչ գերմանացիներ, տարբեր գործերով և տարբեր ժամանակներում տարբեր մեղադրանքներով դատապարտվել են գերմանական դատարանների կողմից: Դատավճիռներով նրանց վրա դրվել է նաև դատական ծախսերի հատուցման պարտավորություն, որի մեջ ներառվել է թարգմանչի համար կատարված ծախսերը:

Դիմումատուները վիճարկել են թարգմանչի ծախսերն իրենց վրա դնելու համապատասխանությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածին /Արդար դատաքննության իրավունք/ և պահանջել են այն դիտարկել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համատեքստում այն առումով, որ նման մոտեցման դեպքում, գերմանացի ամբաստանյալի համեմատությամբ իրենք դատարանում հայտնվում են ավելի աննպաստ վիճակում,

իրենց վրա դրվում է ավելի ծանր պարտականություն, քան նման վիճակում հայտնված գերմանացու:

Թարգմանչի համար կատարված դատական ծախսերը դատապարտյալների վրա դնելը ԳՖՀ կառավարությունը փորձել է արդարացնել Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված անվճար թարգմանիչ ապահովելու պահանջն իր մեկնաբանությամբ:

Ըստ կառավարության, Կոնվենցիայով նախատեսված «անվճար» հասկացությունը վերաբերում է դատաքննության պրոցեսին և չի արգելում նման ծառայություն ստացած անձի վրա նման ծախսերը հատուցելու պարտավորություն դնելը, եթե նա մեղավոր է ճանաչվել:

Ինչպես հանձնաժողովը, այնպես էլ Դատարանը չեն համաձայնվել կառավարության նման մեկնաբանության հետ և գտել են, որ Կոնվենցիան «անվճար» հասկացությունն օգտագործում է առանց վերապահումների: Հետևաբար, թարգմանչի վարձատրության ծախսերը նույնպես դատապարտյալների վրա դնելը, համարվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 /ե/ կետի խախտում:

Դատարանը գտել է նաև, որ իրոք, եթե մեղադրյալի համար առկա է սպառնալիք, որ հետագայում թարգմանչի ծախսերն իր վրա կարող են դրվել, կարող է հրաժարվել թարգմանչի ծառայություններից և հայտնվել դատավարության լեզուն իմացողի հետ անհավասար իրավիճակում, ինչը համապատասխանում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտման հատկանիշներին:

Դատարանն այս գործով գտել է, որ բավարար է գործի քննությունը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում, իսկ 14-րդ հոդվածի իմաստով գործի քննության անհրաժեշտություն չի առաջանում:

4/ 26.04.1979թվականին Դատարանը լսել է «Սանդի Թայմս»-ն ընդդեմ Միացյալ թագավորության գործը:

1959-1962 թվականների ընթացքում Անգլիայում շատ երեխաներ ծնվելիս են եղել արատներով: Պատճառը եղել է այն, որ նրանց մայրերը հղիության ընթացքում, որպես հանգստացնող կամ անքնության դեմ միջոց, ընդունել են տալիդոմիդ:

Ծնողները, որոնց երեխաները ծնված են եղել արատներով, դատական գործ են սկսել տվյալ դեղամիջոցն արտադրող «Դիստիլլերս» ընկերության դեմ:

1972 թվականին «Մանդի թայմս» թերթը հոդված է հրապարակել **«Մեր տալիդոմիդային երեխաները՝ ազգային խայտառակության պատճառը»** վերնագրով և հայտարարել է, որ շարունակելու է հրապարակումները՝ հետևելով ամբողջ գործընթացին՝ արտադրությունից մինչև դեղանյութի տեստավորումը:

Նման հրապարակումների վրա արգելք դնելու պահանջով Ընկերությունը գլխավոր աստորնեյի միջոցով բարձրագույն դատարան է դիմել այն հիմնավորմամբ, որ նման հրապարակումները հանդիսանում են անհարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ, քանի որ գործով դատավարությունը դեռևս ավարտված չէ:

Բարձրագույն դատարանը արգելանք է դրել հետագա նման հրապարակումների վրա, որը, սակայն, վերացվել է Վերաքննիչ դատարանի կողմից: Գլխավոր աստորնեյի պահանջով Լորդերի պալատը վերականգնել է բարձրագույն դատարանի սահմանած արգելքը:

Այս գործով դիմողը պնդել է, որ բարձրագույն դատարանի կողմից սահմանված և Լորդերի պալատի կողմից պաշտպանված արգելքը հակասության մեջ է Կոնսլենցիայի 10-րդ հոդվածի հետ /արտահայտվելու ազատություն/, իսկ գործի քննության ընթացքում՝ 10-րդ հոդվածի համակցությամբ, առաջ է քաշվել նաև 14-րդ հոդվածի խստված լինելու

հանգամանքը, քանի որ նույնանման հրապարակումներն այլ թերթերում չեն արգելվել:

Թերթի հրապարակումների վրա դրված նման արգելքը դատարանը գնահատել է որպես Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

Անդրադառնալով 14-րդ հոդվածի խախտման հանգամանքին, դատարանը գտել է, որ այն առկա չէ, քանի որ այլ հրապարակումների քննադատության օբյեկտները եղել են բոլորովին այլ և իրենց կարգավիճակով դատարանի կարգավիճակի հետ ոչ համեմատելի, բացի դա՝ այլ հրապարակումները դուրս են դատարանի քննարկման շրջանակներից:

5/ 13.06.1979թ. Մարքսն ընդդեմ Բելգիայի գործը:

Ալեքսանդրա Մարքսը հանդիսանում է Պաուլա Մարքսի արտասամուսնական կապերից ծնված աղջիկը:

Բելգիայի քաղաքացիական օրենսգիրքը արտամուսնական կապերից ծնված երեխայի համար նախատեսում էր ծնողական իրավունքի ճանաչման բավականին բարդ ընթացակարգ: Եթե ամուսնացած կնոջ մայրությունը ճանաչվում էր հենց միայն երեխայի ծննդյան փաստով, ապա չամուսնացած կինը երեխայի մայր ճանաչվելու համար պետք է ներկայացներ հայտարարություն և ապա անցներ որոշակի բարդացված ընթացակարգ:

Բացի դա, նույն օրենքով զգալիորեն սահմանափակված էին արտամուսնական կապից ծնված երեխայի և նրա մոր ժառանգական իրավունքները:

Ալեքսանդրա և Պաուլա Մարքս դիմումատուները պնդել են, որ քաղաքացիական օրենսգրքի այդ նորմերի արդյունքում իրենք դարձել են Կոնվենցիայի 3-րդ /արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու/ հոդվածի և 8-րդ /անձնական և ընտանեկան կյանքը հարգե-

լու իրավունք/ հոդվածի, ինչպես նաև 8-ր հոդվածի համակցության մեջ 14-րդ հոդվածի խախտման գոհ:

14-րդ հոդվածը վկայակոչվել է այն կապակցությամբ, որ չամուսնացած կինը և նրա երեխան ամուսնացած կնոջ և նրա երեխայի համեմատությամբ անբարենպաստ վիճակում են դրվում ինչպես իրավունքների պաշտպանության, այնպես էլ պետության կողմից նրանց անձնական և ընտանեկան կյանքին միջամտելու առումով:

Կառավարությունը փորձել է նման տարբերակումը բացատրել երեխայի շահերի պաշտպանության նպատակներով: Կառավարությունը պատճառաբանել է, թե հաճախակի են այն դեպքերը, երբ չամուսնացած կինը հրաժարվում է իր «ապօրինի» ծնած երեխայից, որ նախապես հնարավոր չէ իմանալ, թե ինչպիսին կլինի նման մոր վերաբերմունքը երեխայի նկատմամբ, որի պատճառով անհրաժեշտ է դառնում մայրությունը ճանաչելուց առաջ այդ հանգամանքները հատուկ ստուգել ընթացակարգերով:

Դատարանը չի համաձայնվել պատասխանողի նման հիմնավորումների հետ և գտել է, որ դիմումատուների նկատմամբ խախտվել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պահանջն ինչպես առանձին վերցված, այնպես էլ 14-րդ հոդվածի հետ համակցված:

Այս գործով առկա է դատավոր Սեր Ջերալդ Ֆիցմորիսի առանձին կարծիքը, որով նրա կողմից գնահատականներ է տրվել Կոնվենցիայի 14-րդ հոդվածի տեղին, դերին և կիրառման պայմաններին, որը համապատասխանում է Եվրոդատարանի որդեգրած մոտեցումներին, ուստի և մեջբերվում են տվյալ կարծիքից առանձին հատվածներ.

«14-րդ հոդվածն իր ամբողջության մեջ հանդիսանում է օժանդակ և ենթակա նորմ: Այն չի կարող գործել ինքնուրույն, այլ միայն Կոնվենցիայի կամ Արձանագրության մյուս

հողվածների հետ համակցված: Նրանում միակ սկզբունքը, որը համապատասխանում է սույն նպատակներին, դա չափազանց կարճ մուտքային արտահայտությունն է հետևյալ բովանդակությամբ.

«Սույն Կոնվենցիայով ճանաչված իրավունքներից և ազատություններից օգտվելը պետք է իրականացվի առանց որևէ խտրականության.....»:

Այն պատճառով, որ այն չունի իր կիրառման առանձին բնագավառը, այսինքն ինքնին չի հանդիսանում առանձին նյութական բովանդակություն պարունակող իրավունք՝ ինչպիսին էլ լինեն հիմնական իրավունքները, և կարող է գործել միայն Կոնվենցիայի կամ Արձանագրության այս կամ այն հոդվածի համակցության մեջ, հետևաբար այն կարող է գործել այն դեպքում միայն, երբ կոնկրետ բողոքն ընկնում է Կոնվենցիայի այլ նորմի ազդեցության ոլորտը: Հետևաբար, մինչ այն, երբ 14-րդ հոդվածը կարող է գործել՝ նույնիսկ այլ հոդվածների համակցությամբ, անհրաժեշտ է նախապես համոզվել, որ տվյալ գործով առկա են պաշտպանության ենթակա իրավունքներ»:

Ինչպես արդեն ասվել է, Մարդու իրավունքների կոմիտեն, ի տարբերություն Եվրոդատարանի, Դաշնագրի խտրականությունն արգելող նորմերը դարձնում է առանձին քննարկման առարկա:

3.1.4 Խտրականության խնդիրները ՀՀ իրավական ակտերում

Մարդու իրավունքների Կոմիտեի, Եվրոդատարանի և Ամերիկյան Գերագույն դատարանի որոշումները խտրականությանը վերաբերող գործերով կիրառելի են նաև Հայաստանի Հանրապետության համար՝ այնքանով, որքանով սահմանում են Եվրոկոնվենցիայով և Դաշնագրերով սահմանված խտրականությունը բացառող սկզբունքների կիրառ-

մանը միջազգային այդ փաստաթղթերն ստորագրած պետությունների համար պարտադիր մոտեցումները:

Հայաստանի Հանրապետությունը, միանալով մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող միջազգային փաստաթղթերին, պարտավորվել է իր օրենսդրությունը համապատասխանեցնել դրանց պահանջներին:

Արդեն ասվել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը, ինչը, սակայն, լիովին չի բացառել այս կամ այն օրենքում կամ իրավական այլ ակտում խտրականություն պարունակող կամ խտրական մոտեցման տեղ թողնող նորմի առկայությունը:

Օրինակ, **«Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների մասին»** 2008 թվականի հունիսի 10-ին ընդունված ՀՀ օրենքը: Օրենքով թույլատրվում է մինչև 2001 թվականը կառուցված բնակելի տներին կից շինությունները, մինչև 300 քմ. ինքնակամ զբաղեցրած հողամասերը, որոնց օրինական լինելու վերաբերյալ փաստաթղթեր չկան, օրինականացնել և ճանաչել որպես տվյալ անձի սեփականություն:

Այս օրենքը կարելի է համարել խտրական այն առումով, որ այդ օրենքով Երևան քաղաքի բնակիչների համար սահմանվում է արտոնություն, որից չեն կարող օգտվել նույն պայմաններում հայտնված այլ բնակավայրի բնակիչները:

Նախագծի հեղինակները նման տարբերակված մոտեցումը պատճառաբանել են նրանով, որ ինքնակամ կառույցները տարածում ունեն հատկապես Երևան քաղաքում:

Օրենքի հակասահմանադրական լինելու հարցը Սահմանադրական դատարան չհասավ, քանի որ Ազգային ժողովի կողմից 27.04.10թ. տվյալ օրենքում կատարվեց համապատասխան փոփոխություն և լրացում, որով այն կիրառելի է նաև Հանրապետության այլ բնակավայրերի բնակիչների

համար: Օրենքի վերնագրից հանված են «Երևան քաղաքում» բառերը:

Այստեղ խտրականությունն առկա էր **բնակավայրի հատկանիշով**, որը մտնում Եվրոկոնվենցիայի 14-րդ և ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածներով թվարկված հատկանիշների մեջ: Այն խտրականություն կարող է գնահատվել որպես նշված նորմերով «այլ դրություն» կամ «այլ հատկանիշ» նշվածի իմաստով:

ՀՀ քրեական օրենսգրքի 343 հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է սահմանում դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար: Որպես այդ հանցագործության սուբյեկտներ թվարկվում են վկան, տուժողը և պաշտպանը: Դատավարության այլ մասնակիցները՝ այդ թվում նաև մեղադրողը, տվյալ հանցագործության սուբյեկտ չեն հանդիսանում:

Ստացվում է, որ դատավարության մասնակիցներից պաշտպանության կողմի նկատմամբ առկա է քրեական պատասխանատվության սպառնալիքը, իսկ մեղադրող կողմը նման սպառնալիքից ազատ է:

Քանի որ քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է կողմերի մրցակցության և հավասարության սկզբունքը, բնականաբար Քրեական օրենսգրքի հիշյալ նորմը կողմերի համար ստեղծում է անհավասար պայմաններ, որով խախտվում է օրենքի առջև հավասարության սկզբունքը, պաշտպանական կողմի նկատմամբ ցուցաբերվում է խտրական մոտեցում:

ՀՀ Սահմանադրական դատարանի 14.01.010թ. որոշմամբ քրեական օրենսգրքի այդ նորմը ճանաչվել է ՀՀ Սահմանադրությանը հակասող նաև խտրական լինելու հիմքերով:

«Այլընտրանքային զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքով կրոնական համոզմունքներով զինվորական ծառայությունից հրաժարվող քաղաքացիների համար որպես այլընտրանքային ծառայություն նախատեսվում է սահմանված

վայրերում աշխատանքային ծառայությունը, որի ժամկետը նախատեսվում է 3,5 տարի այն դեպքում, որ ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունը սահմանված է 2 տարի:

Այն կարող է գնահատվել որպես խտրականություն կրոնական համոզմունքների հիմքերով այնպես, ինչպես գնահատվել է Եվրոդատարանի 03.11.99թ որոշմամբ՝ Ֆրեդրիկ Ֆուեն ընդդեմ Ֆրանսիայի գործով:

Օրենքը շարունակում է գործել, քանի որ նման դիմումներ չեն ներկայացվել Սահմանադրական դատարան կամ Եվրոդատարան:

Պետք է նկատել, որ 2005 թվականի Սահմանադրական փոփոխություններից հետո, երբ Սահմանադրությամբ նաև քաղաքացիներին իրավունք վերապահվեց իրենց գործով կիրառված օրենքի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավունք, օրենքների սահմանադրականության խնդիրը, այդ թվում նաև դրանց խտրական լինելու խնդիրը, ավելի հաճախակի է քննության առարկա դարձվում Սահմանադրական դատարանում, ինչը և դրական ազդեցություն ունի օրենքների բարեփոխման վրա:

ՀՀ քրեական օրենսգրքով, բացի այն, որ հանցագործության ռեցիդիվը որոշ հանցագործությունների դեպքում արարքը դարձնում է որակյալ, դիտվում է նաև որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Օրենքի տրամաբանությամբ նույնական փաստական հանգամանքներն ունեցող արարքի համար ամբաստանյալներից նա, ով չունի նախկին դատվածություն, պետք է կրի ավելի մեղմ պատիժ, քան նա, որը նախկինում կատարել է նույնանման կամ այլ հանցանք, պատիժ է կրել և այժմ դատվում է նոր հանցանքի համար:

Այսպիսի մոտեցումը փորձ է արվում արդարացնել նրանով, որ պատիժը նպատակ ունի նաև անձին ուղղելու և վերադաստիարակելու, որ կրկնահանցագործի անձը հանրության համար առավել վտանգավոր է, քան առաջին անգամ հանցանք կատարածի անձը:

Այդ խնդրին անդրադարձել է Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը և ՌԴ քրեական օրենսգրքի նման նորմերը չի ճանաչել Սահմանադրությանը հակասող՝ գտնելով, որ պատժի սահմանում օրենսդրի հայեցողական իրավունքի իրականացումն է և նման տարբերակումն արդարացված է հանրային անվտանգության շահերով:

Մեր Սահմանադրական դատարանը նույնպես այդ խնդրին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանի և Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարանի դատավորի դիմումի հիման վրա: Սահմանադրական դատարանն իր 11.05.010թ. որոշմամբ գտել է, որ կրկնահանցագործության համար առավել խիստ պատիժ սահմանելը խտրականության խնդիրներ չի առաջացնում:

4. Խտրականության դրսևորումներն իրավակիրառական պրակտիկայում

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով Հանրապետությունը հռչակված է՝ ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական:

Իրավական պետության կարևորագույն չափանիշն օրենքի պահանջի կատարման անդառնալիությունն է, բոլորի համար հավասար չափով պարտադիր լինելը և օրենքի առջև բոլորի հավասարությունը:

Իրավական պետությունն իրավունք չունի սահմանել խտրական օրենք, իրավական ակտ, թույլատրել գերակա հանրային շահով չթելադրված և չարդարացված տարբերակում անձանց կամ անձանց խմբերի միջև, խտրական

մոտեցում թույլատրել օրենքի, այլ իրավական ակտի կիրառման ընթացքում:

Խտրականության արգելքի ամրագրումը Մահմանադրությամբ և օրենքներով չի կարող բավարար համարվել խտրականությունը բացառելու համար: Իրավական նորմը կարող է մնալ միայն որպես դեկլարացիա, եթե իրավակիրառական պրակտիկայում նրա արգելմանն ուղղված իրական մեխանիզմները բացակայում են՝ իրականության մեջ չի ապահովվում օրենքի առջև հավասարությունը:

Իրավունքի տրամադրման, պարտականություններից ազատման հարցերում կոռուպցիան, պաշտոնական դիրքի չարաշահումը ինքնին արդյունք են խտրական մոտեցման: Պաշտոնատար անձը դիմողի նկատմամբ ցուցաբերում է խտրական մոտեցում օրենքը շրջանցելու, օրենքը խախտելու կամ խտրական մոտեցման համար օրենքում տեղ թողնված լինելու պատճառով: Դա տեղի է ունենում հատկապես այն դեպքերում, երբ օրենքը վարչական մարմնի համար սահմանել է հայեցողական մոտեցում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված հայեցողական իրավունքի չարաշահման արգելքի սկզբունքը բավարար չէ բոլորի նրկատմամբ միանման մոտեցում ապահովելու համար: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի ամբողջ համակարգն այն աստիճան բաց լինի, որ դիմողը կարողանա վկայակոչել նույնանման հանգամանքը կամ հանգամանքները՝ իր նկատմամբ խտրական մոտեցումը գնահատելու համար:

Մինչդեռ, վարչական մարմինն իր այս կամ այն անհատական ակտը կարող է գաղտնիացնել՝ անձնական տվյալներ պարունակելու առումով կամ ձևական առումներով տարբեր համարել տուժողի դիմումի հետ կապված փաստական հանգամանքները: Օրենքի այդ նորմը այս տեսակետից մնում է որպես հոչակագիր:

Վերևում հիշատակված «Երևան քաղաքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը և դրան նախորդած «Ինքնակամ կառույցների և ինքնակամ զբաղեցված հողամասերի կարգավիճակի մասին» օրենքը պարունակում են բազում սողանցքներ հայեցողական և նույնիսկ կամայական մոտեցումների՝ կոռուպցիայի համար:

Օրինակ, մեր ուսումնասիրած դեպքերից մեկով բազմաբնակարան շենքի բակում առկա են մինչև բազմաբնակարան շենքի կառուցումը կառուցված երեք անհատական բնակարաններ՝ առանց սեփականությունը հաստատող փաստաթղթերի: Անառարկելի է, որ դրանք դեռևս 30-ական թվականներին ձեռք բերված սեփականություն են, սակայն հաշվառված են որպես ինքնակամ կառույցներ:

2008 թվականի օրենքի կարգով 3 բնակարաններից երկուսի նկատմամբ քաղաքապետարանը ճանաչել է դրանք տիրապետողների սեփականության իրավունքը: Երրորդ տիրապետողը, որը դիմել է ավելի ուշ, մերժում է ստացել այն հիմնավորմամբ, որ «հավանաբար նրա բնակարանը եղել է իրացման գոտում և իրացման կապակցությամբ նա ստացել է փոխհատուցում, չի ազատել բնակարանը՝ իրացնողների անհետևողականության պատճառով»:

Մի կողմ թողնելով այն, որ վարչական մարմնի կողմից արվել են չհիմնավորված ենթադրություններ, այստեղ կարևորում ենք կամայական տարբերակումը նույնանման իրավիճակի համար, որն էլ ենթակա է գնահատման որպես խտրական մոտեցում այլ հանգամանքների հիմքերով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանեկան նպաստ տրամադրվում է անապահովության համապատասխան ցուցանիշ ունեցող ընտանիքներին, իսկ այդ ցուցանիշը սահմանվում է փաստաթղթերով հիմնավորված տվյալների գնահատմամբ:

Ընտանիքի անապահովության ցուցանիշների վերաբերյալ փաստաթղթերի իսկությունը ստուգող, ցուցանիշը հաշվարկվող պաշտոնատար անձանց մոտեցումները հաճախակի կրում են խտրական բնույթ, որի արդյունքում սոցիալապես շատ ապահով ընտանիքներ օգտվում են նպաստառուի իրավունքներից, իսկ առավել կարիքավորներից շատերն այդ իրավունքից չեն օգտվում:

Այստեղ խտրական մոտեցումը կարող է արտահայտվել նրանում, որ, օրինակ, դիմորդներից մեկի դեպքում ընտանիքում ապրող, սակայն ընտանիքի անդամ չհանդիսացող անձը սոցիալական ծառայության աշխատողի կողմից կարող է գնահատվել որպես ընտանիքի անդամ և անապահովության ցուցանիշի վրա ազդող, մեկ ուրիշ դեպքում նման ստուգում չկատարել և անտեսել այդ անձին: Կամ նպաստ հայցողներից մեկի դեպքում տնամերձ հողամասի առկայությունը կարող է անտեսվել, մեկ ուրիշ դեպքում դա ճանաչվել որպես անապահովության ցուցանիշի վրա ազդող հանգամանք:

Այս բնագավառում խտրական մոտեցումը դրսևորվում է ոչ միայն սոցիալական մարմնի աշխատողների, այլ նաև համապատասխան տեղեկանքներ, ընտանիքի անապահովության վերաբերյալ տեղեկություններ տրամադրող մարմինների կողմից:

Օրինակ, գյուղապետը տեղեկանքներ է տալիս ընտանիքի ունեցվածքի վերաբերյալ: Մեկի դեպքում կարող է թաքցնել անասունների առկայությունը կամ պակաս ցույց տալ գլխաքանակը, նույնը նաև հողամասի վերաբերյալ, մեկ ուրիշ դեպքում որպես ունեցվածք ցույց տալ նույնիսկ անօգտագործելի գույքը: Կամ սոցիալական աշխատողը մեկի դեպքում կարող է ստուգել ներկայացված փաստաթղթերի իսկությունը, մեկ ուրիշի դեպքում՝ դրանք չստուգել նույնիսկ եթե կան կասկածի տեղիք տվող ակնառու հանգամանքներ:

2006 թվականին ընդունված «**Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին**» ՀՀ օրենքի կիրառումը հանգեցրել է զգալի դժգոհությունների հենց այն պատճառով, որ սեփականատեր-ձեռք բերող հարաբերություններում առկա է շահերի բախում և օրենքը տեղ է թողել կողմերի սուբյեկտիվ մոտեցումների՝ վերցվող սեփականության գնահատման և փոխհատուցման տրամադրման հարցերում: Այստեղ ձեռք բերողն է, որ խտրական մոտեցում է ցուցաբերում տարբեր սեփականատերերի և օգտագործողների նկատմամբ:

Օրենքի անտրամաբանական կողմն այն է, որ պետությունն իր անունից հարկադրանք է սահմանում սեփականատիրոջ նկատմամբ՝ հարկադրում է օտարել իր սեփականությունը: Օտարման ենթակա գույքի ձեռք բերման իրավունքը տրամադրելով մասնավորին, ինքը մի կողմ է կանգնում և սեփականատիրոջն ու ձեռք բերողին թույլ է տալիս միմյանց հետ վեճ սկսելու, ինքը չի միջամտում ոչ մի առումով՝ առաջարկելով գնալ դատարան:

Տրամաբանական կլիներ, եթե սեփականատիրոջ հետ հարաբերվեր պետությունը, որը և կկրեր իր գործողությունների՝ անձին սեփականությունից զրկելու, հետևանքները:

Այս իրավիճակներում խոսք կարող է լինել նաև ընդհանրապես սեփականատերերի նկատմամբ խտրական մոտեցման մասին՝ առանձին անհատներ կամ անհատների խմբեր հարկադրված են օտարել իրենց անշարժ գույքը, մյուսները նման պարտադրանքի չեն ենթարկվու: Առաջին խմբին պատկանող անձինք հանրայի շահի թելադրանքով դրվում են անբարենպաստ վիճակում, հետևաբար պետք է ստանան այնպիսի փոխհատուցում, որը բավարար կլիներ նաև վերականգնելու նրանց կրած բարոյական վնասը: Մինչդեռ օրենքն օգտագործել է «շուկայական գին» հասկացությունը, որը ոչ

մի դեպքում չի պարունակում սեփականատրիբոջ հաշվարկման չտրվող բարոյական վնասը:

Կարևորելով հատկապես անձի դատական պաշտպանության իրավունքի անխտրական իրականացումը, դատարանի նկատմամբ մեզանում առկա անվստահությունը պայմանավորում ենք դատարանների կողմից նույնական հանգամանքների պայմաններում հաճախակի խտրական մոտեցում ցուցաբերելու հանգամանքով: Մինևս փաստական հանգամանքների առկայության դեպքում տարբեր բնույթի դատական ակտ կայացնելը՝ դատական պաշտպանության իրավունքի խախտում հանդիսանալով հանդերձ, խտրականության դրսևորում է:

Դատարանի կողմից խտրական մոտեցումն արդյունք կարող է լինել կոռուպցիայի կամ դիմողի հասարակական դիրքի, դատավորի հետ ունեցած մոտիկ կապերի:

Այն, որ վճռաբեկ դատարանը խնդիր ունի ապահովելու օրենքի միատեսակ կիրառումը՝ մինևս փաստական հանգամանքներին նույնանման մոտեցում ցուցաբերելու առումով, կարևոր նշանակություն ունի խտրականության բացառման համար: Սակայն այս դեպքում էլ բախվում ենք խտրական մոտեցման վճռաբեկ դատարանի կողմից՝ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու կամ չընդունելու հարցում:

Խնդիրը նրանում է, որ վարույթ ընդունած գործերով վճռաբեկ դատարանի որոշումները, որպես նախադեպային իրավական ակտեր, հրապարակվում են, ինչը Վճռաբեկ դատարանին հարկադրում է խուսափել հակասական դատական ակտեր կայացնելուց: Դրան զուգահեռ, Վճռաբեկ դատարանն ունի մեկ այլ հնարավորություն՝ ձևական պատճառաբանությամբ վարույթ չընդունել այնպիսի գործով վճռաբեկ բողոքը, որով հարկադրված պետք է լինի բեկանել ստորադաս դատարանի դատական ակտը:

Վճռաբեկ դատարանը հայտարարել է, որ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելն իր համար հայեցողական իրավունք է և

պարտավոր չլինելով նույնիսկ հիմնավորել վճռաբեկ բողոքի վարույթ չընդունելու մասին որոշումը, այնուամենայնիվ հարկադրված է նաև հիմնավորել՝ Սահմանադրական դատարանի կողմից նման պահանջ ներկայացված լինելու պատճառով:

Եթե դատական բարձրագույն ատյանի համար օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու պարտականությունը հայեցողական է, ուրեմն ստորադաս դատարանները հնարավորություն ունեն կայացնելու ցանկացած բնույթի դատական ակտ՝ օրենքի կողմից հավասար պաշտպանության իրավունքը թողնելով որպես հռչակագիր:

Կա նաև դատարանի կողմից դատավարության մասնակիցների նկատմամբ հավասար վերաբերմունքի խնդիրը:

Բոլոր դեպքերում դատարանում տեսանելի է լինում այն, որ բոլորովին միևնույն վերաբերմունքը չէ, որ դատարանն ունենում է կրկնահանցագործի և առաջին անգամ դատվողի, մտավորականության ներկայացուցիչ ամբաստանյալի նրկատմամբ: Այլ է վերաբերմունքը նաև վկայի, տուժողի, քաղհայցվորի նկատմամբ, երբ նրանք ունեն հասարակական որոշակի դիրք, այլ է, երբ ընդամենը շարքային քաղաքացի են:

Հայաստանի Հանրապետության Վարչական դատավարության օրենսգրքով սահմանված է կարևորագույն մի սկզբունք՝ կողմի փաստաբան չհանդիսացող ներկայացուցչին հեռացնել վարույթից, եթե պարզում է, որ այդ ներկայացուցչի գիտելիքները բավարար չեն կողմի շահերը ներկայացնելու համար:

Օրենքի նպատակն է՝ ապահովել դատական պաշտպանության իրավունքի իրականացումը կողմերի հավասարության պայմաններում:

Սա օրենքի պահանջն է, օրենքը կանգնած է անխըրրականության դիրքերում, ինչը դարձյալ բավարար երաշխիք չէ, եթե չկիրառվի իրականության մեջ:

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրքը նախատեսել է մի շարք նորմեր, որոնք արգելում են խտրականությունն աշխատողների նկատմամբ՝ աշխատանքի ընդունելիս, աշխատանքի պայմաններ տրամադրելիս, պաշտոնում առաջխաղացման, վարձատրության, աշխատանքից ազատման և աշխատանքային այլ հարաբերություններում:

Քաղաքացիական ծառայության կամ պետական պաշտոնի անցնելու յուրաքանչյուրի համար հավասար հնարավորություն ապահովելուն է նպատակաուղղված օրենքով մրցույթային կարգի սահմանումը:

Մտացվում է, որ օրենքով սահմանված է իր ցանկությամբ աշխատանք ընտրելու հնարավորությունը յուրաքանչյուրի համար հավասարապես, իսկ թե որքանով է երաշխավորված այդ հավասարությունը իրականության մեջ որքանով է ապահովված, այլ հարց է:

Իրականությունն այն է, որ երբ ստեղծվում է քաղաքացիական ծառայության կամ պետական պաշտոնի ազատ հաստիք, անմիջապես էլ գործի են դրվում անձնական կապերը, մրցույթն ընթանում է ոչ միայն գիտելիքներ և կարողություններ ստուգող համապատասխան հանձնաժողովում, այլ դրանից դուրս, և հենց այս երկրորդ մրցույթում հաղթողն էլ զբաղեցնում է տվյալ պաշտոնը. օրենքով ամրագրված հավասար հնարավորությունների սկզբունքն այստեղ պահպանված է միայն արձանագրային փաստաթղթերում:

Ավելի վատթար է վիճակը մասնավոր հատվածում: Անհատ գործատուն աշխատողներ ընտրում է իր հայեցողությամբ, իր ճաշակով և իրեն ձեռնտու պայմաններով: Մասնավոր գործատուն իր պայմաններն աշխատողին թելադրելու և իրեն ձեռնտու պայմաններով աշխատանքի ընդունելու հնարավորություն ունի և լայնորեն օգտվում է դրանից՝

օգտվելով մեզանում աշխատանքի շուկայի հագեցվածության և արհմիությունների կայացած չլինելու հանգամանքից:

Իրականության մեջ աշխատանքային հարաբերություններում առկա խտրականությունը բնորոշ օրինակ է այն բանի, թե ինչպես օրենքով սահմանված հավասարությունը կարող է գործնականում որևէ դեր չունենալ:

5. Խտրականություն չհամարվող տարբերակում

Հասարակության անդամների բացարձակ հավասարությունը, հավասարության բացարձակացումն իդեալիզմ է և եղել ու մնում է որպես երազանք: Տեղին է հիշելը, որ դեռևս մեր թվարկությունից առաջ 9-ից 8-րդ դարերում Մպարտայի օրենսդիր Լիկուրգը սահմանեց նման հավասարություն՝ ճոխության առարկաների, խնջույքների արգելում, գույքային հավասարություն, համատեղ ընթրիք և այլն: Նա այն օրենսդիրն է, որը ոսկին հանեց քաղաքացիական շրջանառությունից և դրա փոխարեն որպես փոխանակման միջոց ներդրեց երկաթը՝ կաշառքը, հետևաբար և այլոց հաշվին հարստանալու երևույթը կանխելու, գույքային հավասարություն ապահովելու նպատակով:

Ենթադրում ենք, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո առաջ քաշված կոմունանների գաղափարը վերցված էր հենց այստեղից, այն նույնպես հիմնված էր համատեղ գույք, համատեղ զբաղմունք, համատեղ կենցաղ ունենալու գաղափարի վրա: Պատահական չէ, որ կոլեկտիվացման գաղափարի դեմ պայքարողները լուրեր էին տարածում, որ այդ ճանապարհին հանրայնացվելու են նաև ընտանիքները, այդ թվում նաև կանայք:

Պատմությունը ցույց է տվել, որ բացարձակ հավասարությունն անիրականանալի է և հակասում է մարդկության բնույթին, մարդու բանականությանը:

Կենդանական աշխարհի ոչ բանական արարածները, որոնք գոյատևում են բացառապես բնության հաշվին, ունեն հավասար հնարավորություններ՝ բնությունից վերցնելու իրենց կենսականի համար անհրաժեշտը և վերցնում են իրենց ֆիզիկական կարողությունների չափով, նրանց հնարավորությունների, իրավունքների սահմանը պայմանավորված է ֆիզիկական կարողություններով:

Մարդը, որպես բնության միակ բանական արարած, չի կարող իր կենսական կարիքները բավարարել միայն բնության պարզկներով, նա կոչված է նաև ստեղծելու, բնության տվածը ձևափոխելու, ֆիզիկական և մտավոր կարողությունների ներդրում կատարելու: Հետևաբար, երբ առաջ է գալիս նյութական և այլ բարիքների բախշման հարցը, առաջանում է նաև արդարացիության խնդիրը՝ յուրաքանչյուրը կարող է ստանալ իր ներդրածի չափով, ինչը հանգեցնում է նյութական անհավասարության:

Ստեղծելու, վերամշակելու, հարմարեցնելու, ներդրում կատարելու յուրաքանչյուր անհատի կարողությունը պայմանավորված է նրա ֆիզիկական և մտավոր կարողություններով: Անհատականությունը բնական առանձնահատկություն է և մարդկանց տարբերակումը՝ ուժեղի և թույլի, խելացիի և տգետի, գիտունի և անգետի, կրթվածի և կրթություն չունեցողի, մասնագետի և ոչ մասնագետի և այլն, օրենքով չէ, որ պարտադրվում է, դա յուրաքանչյուրի անհատականությունն է և պարտադրանքի տրվել չի կարող, հետևաբար և նման տարբերակումը դուրս է խտրականության ոլորտից:

Հասարակությունը, բաղկացած լինելով այսպիսի բազմաբնույթ անհատներից, խնդիր ունի նրանց հնարավորությունները համախմբել և ծառայեցնել համընդհանուր հասարակական շահին: Այդ շահը, լինելով համընդհանուր բարեկեցության հասնելը, պետք է լուծի բազմաբնույթ խնդիրներ՝ բնական նորանոր տարածքներ նվաճելուց մինչև ֆիզիկա-

կան աշխատանքի իսպառ բացառումը, բնական երևույթներից լիարժեք անկախացումը:

Իր այդ խնդիրները հասարակությունը պետք է լուծի իր անհատների անհատական կարողություններն օգտագործելու, նրանցից յուրաքանչյուրի կողմից այդ ճանապարհին ներդրում կատարելու համար հավասար հնարավորություն ապահովելու միջոցով: Հասարակությունն իր այդ խնդիրը լուծելիս հաջողակ է, համարվում է զարգացած հասարակություն, եթե առավել մեծ թիվ են կազմում ունակ և կարող անհատները:

Զարգացած հասարակություն ունենալու համար առաջ է գալիս հանրությունը կազմող անհատներին կրթելու, մասնագիտացնելու անհրաժեշտությունը, որի դեպքում նաև առաջ է գալիս կրթություն ստանալու, մասնագիտություն ձեռք բերելու հավասար հնարավորության իրավունքը:

Եթե տարրական, միջնակարգ կրթությունը հասանելի է յուրաքանչյուրին՝ անկախ մտավոր կարողություններից, ապա բարձրագույն կրթություն ստանալու համար առկա են որոշակի սահմանափակումներ. քննությունների, զանազան տեստավորումների միջոցով որոշվում են այն անձինք, որոնք օգտվում են բարձրագույն կրթություն ստանալու իրավունքից: Փաստորեն տեղի է ունենում տարբերակում մտավոր կարողությունների չափանիշով: Նման տարբերակումը ողջամտորեն թելադրված է բարձրագույն կրթության իմաստի և հասարակական նշանակության տեսակնկյունից և չի կարող գնահատվել որպես խտրականություն:

Տարբերակում է կիրառվում նաև ուսման գործընթացում՝ քննությունների ընթացքում հավաքած բալերի հաշվարկով հավակնորդների մի մասն ընդունվում է վճարովի համակարգ, մի մասն անվճար և նույնիսկ երկրորդներին տրվում է ուսանողական նպաստ: Գերազանց առաջադիմություն ցույց

տրված ուսանողներին տրվող նպաստները որոշ չափով ավելին են:

2005 թվականից բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդրված ռոտացիոն համակարգը կարծես թե գալիս է հարթեցնելու այն իրավիճակը, որը կարող էր խտրական համարվել՝ ընդունելության քննություններին բարձր միավորներ ստացած ուսանողը շարունակում է մնալ անվճար համակարգում՝ թեկուզ և ունի ավելի ցածր առաջադիմություն, քան վճարովի համակարգ ընդունվածները:

Այնուամենայնիվ պայմանավորվե՞նք, որ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու, բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրականացման համար բոլորն ունեն հավասար հնարավորություններ՝ մասնակցելու քննություններին, հավաքելու համապատասխան միավորներ:

Այստեղ նույնպես խտրականություն կարող է տեղ գտնել շնորհիվ կոռուպցիայի՝ ընդունող հանձնաժողովի անդամների կոռումպացված լինելն անպայմանորեն կհանգեցնի խտրականության, քողարկված ձևով տեղի կունենա խտրականություն սոցիալական վիճակի հիմքերով:

Մեզանում չկան խտրականության նախադրյալները ռասայի, մաշկի գույնի, ազգային հատկանիշներով՝ շնորհիվ հասարակության միատարրության: Այդ առումով պրակտիկան նման երևույթների չի բախվում:

Մեծի հատկանիշներով խտրականությունը, թեկուզ և բացառված է օրենսդրությամբ, այնուամենայնիվ իր դրսևորումներն ունենում է հատկապես աշխատանքային հարաբերություններում, պետական կառավարման մարմիններում պաշտոններ զբաղեցնելու դեպքերում: Այդ է պատճառը, որ որոշ օրենքներում կանանց համար նախատեսվում են որոշակի

արտոնություններ հասարակական կյանքի այս կամ այն բնագավառում նրանց հնարավորությունները տղամարդկանց հնարավորություններին հավասարեցնելու համար:

Օրինակ, նկատի ունենալով, որ Ազգային ժողովի պատգամավորների թվում կանանց թիվն զգալիորեն ցածր է, որ ընտրություններում տղամարդկանց հաղթելու հնարավորություններն ավելի են՝ նրանց առավել ակտիվության, տնտեսական և քաղաքական լծակներ ունենալու պատճառով, ինչպես նաև կանանց մտավոր և այլ ունակությունների մասին արմատացած բացասական կարծիքի հետևանքով:

Հենց այդ հիմնավորմամբ ՀՀ ընտրական օրենսգրքով համամասնական ցուցակներ ներկայացնող կուսակցությունները պարտավորեցված են ցուցակներում թեկնածուների թվի հինգ տոկոսից ոչ պակասը հատկացնել կանանց:

Այսպիսի տարբերակումը գնահատվում է որպես ողջամիտ և արդարացված այնքանով, որքանով միտված է սեռերի հնարավորությունների հավասարեցմանը:

Նման տարբերակումը՝ կանանց համար արտոնությունների սահմանումը, ԱՄՆ-ի Գերագույն դատարանի քննած նման գործերում անվանված է «փոխհատուցում կանանց»՝ նախկինում սեռի հատկանիշով խտրականության ենթարկված լինելու կապակցությամբ:

Մեր օրենսդրությունն օգտագործում է «հասարակության խոցելի խմբեր» հասկացությունը և այդպիսիք են համարվում անչափահասները, հաշմանդամները, Աղքատների փախստականները, բռնադատվածները, Հայրենական պատերազմի մասնակիցները, Արցախյան պատերազմի հաշմանդամները, նրանց կամ մահացած ազատամարտիկների ընտանիքները, Մայիտակի երկրաշարժից տուժածները, ծնողազուրկ երեխաները, միայնակ ծերերը և այլն:

Այդ պմբերն ինչու են խոցելի: Նրանք խոցելի են այն առումով, որ այս կամ այն իրավունքից օգտվելու, իրենց այս

կամ այն իրավունքն իրացնելու համար ունեն ավելի պակաս հնարավորություններ, քան հասարակության մյուս անդամները: Օրինակ, անչափահասն ունի խնամքի և հոգատարության, կրթություն ստանալու կարիք, եթե աշխատում է, նրա ֆիզիկական հնարավորություններն ավելի պակաս են, քան չափահասինը, ծանր աշխատանքը կարող է հանգեցնել նրա առողջության խաթարմանը:

Հասարակությունը խնդիր ունի ապահովելու սերնդի շարունակականությունը, առողջ և կրթված սերունդ ունենալու խնդիրը:

Հետևաբար, անչափահասին հասարակական կյանքի այս կամ այն բնագավառում ներգրավելիս, աշխատանքի թույլատրելիս նրա համար սահմանվում են որոշ արտոնություններ, որոնք ողջամտորեն արդարացված են և չեն կարող խտրականություն համարվել: Խտրականություն չի կարող համարվել բազմազան կրթական ընտանիքներին սոցիալական զանազան արտոնությունների և օժանդակությունների տրամադրումը, ծնողագուրկ երեխաներին պետական միջոցներով աջակցությունների, անվճար բուժօգնություն տրամադրելը և այլն:

Պարտադիր զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացիների համար սահմանադրական պարտականություն է: Մակայն այդ պարտականությունը, ի տարբերություն մյուսների, չեն կարող կատարել առաղջության կապակցությամբ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված քաղաքացիները: Նման պարտականությունից նրանց ազատելը նույնպես տարբերակում է, սակայն չի կարող համարվել խտրականություն:

Զինակոչի տարիքը լրանալու պահին երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող քաղաքացիները, ընտանիքի

միակ կերակրողը, պետական պատվերի շրջանակներում բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորող ստանում է զինվորական ծառայությունից տարկետման իրավունք:

Մրանք նույնպես տարբերակումներ են ժամկետային զինվորական ծառայության գորակոչվածների նկատմամբ, սակայն արդարացված են հասարակական պահանջումներով:

Այն դեպքում, երբ խնդիր կա ծնելիության խրախուսման, խնդիր կա ընտանիքի բարեկեցության ապահովման և ընտանիքում արդեն կան երեխաներ կամ խնամքի կարիք ունեցող անձինք, երբ անհատի կրթությունը հասարակության զարգացման հիմքն է, և երկիրը չի գտնվում պատերազմի վիճակում, հնարավորություն կա երկրի պաշտպանությունն ապահովել այլ ճանապարհով, նման անձանց բանակ չգորակոչելը, սահմանադրական այդ պարտականությունից ազատելը չի կարող համարվել խտրականություն:

Հայրենական Մեծ պատերազմի վետերանների, Արցախյան պատերազմի մասնակիցների և նրանց ընտանիքների արտոնությունները մենք նույնպես կարող են անվանել փոխհատուցում այն զրկանքների դիմաց, որոնք նրանք կրել են այդ ժամանակաընթացքում՝ նրանք կատարել են այն, ինչը մյուսները չեն կատարել, նրանք կատարել են նաև մյուսների համար: Հետևաբար, արդարացի է նրանց սոցիալական և այլ բնույթի արտանությունների տրամադրումը և նման տարբերակումը չի կարող համարվել խտրականություն:

Հասարակությունը, հանձինս պետության, պարտավորություն ունի ապահովելու իր անդամների բարեկեցությունը, ներդաշնակ զարգացումը: Նա չի կարող անտեսել այն անձանց, որոնք բնական կամ այլ պաճառներով ունեն

Ֆիզիկական արատներ, որի հետևանքով չեն կարող լիարժեք մասնակցություն ունենալ հասարակական կյանքին, իրենց սոցիալական և այլ կարիքները հոգալու համար ունեն դժվարություններ և հնարավորությունների առումով գտնվում են անհավասար պայմաններում:

Հաշմանդամների համար որոշակի պայմանների ստեղծումը, որոշակի արտոնությունների սահմանումը՝ օրինակ՝ եկամտահարկից ազատումը, աշխատանքի տեղապահումը, նրա աշխատանքի վարձատրության արտոնյալ պայմաններ սահմանելը և այլն, չի կարող դիտվել որպես խտրականություն, քանի որ նպատակաուղղված է հասարակական այնպիսի խնդրի լուծմանը, ինչպիսին է նրանց հասարակական կյանքին ինտեգրելուն:

Ամփոփելով թեման, կարևոր ենք համարում հիշեցնել, որ պետության խնդիրը հանրային հարաբերություններում խտրականության բացառումն է:

Մասնավոր հարաբերություններին վերաբերող հարցերում պարտավոր է նման հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով բացառել խտրականությունն այնքանով, որքանով թույլատրելի են մասնավորի անհատական կամքի սահմանափակումները:

Օրինակ, Քաղաքացիական օրենսգրքով սեփականատիրոջ համար սահմանելով իր գույքը կտակելու ազատություն, կտակարարի կամքը սահմանափակել է ժառանգության պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձանց իրավունքներով:

Համատեղ ընդհանուր սեփականության մասնակիցների կամքը սահմանափակել է այն պարտավորությամբ, որ նրանցից յուրաքանչյուրը սեփականության իր բաժինը կարող է տնօրինել միայն մյուսների համաձայնությամբ:

Նկատի ունենալով, որ խտրականության խնդիրը չափանց առօրեական է և այն շատ ու շատ հարցերում առիթ է դառնում է տարաբնույթ մեկնաբանությունների, նախատե-

սում ենք հետազայում նույնպես անդրադառնալ խտրակա-
նության առանձին դրսևորումների վերլուծությանը:

**«ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ»
հասարակական կազմակերպություն**

**ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ
ԱԶԱՏ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ**

Կազմեցին՝ Ժ. Խաչատրյան
Ք. Գևորգյան

Խմբագիր՝ Յու. Հովհաննիսյան